



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1787

1788

1789

1790

1791

1792

84

f-96



Վ. Ի. Բ. Գ. Ի. Ե. Զ. Ը.
ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ:

ՅՕՐԻՆԵԱՅ,

ՁՄԻՒՆԱՅԻ

Գ. ՄԱՐԳԻՍ Տ. ՄԱՐԳԱՐ ՎԱՆԱՆԴԵՑՅԱՆ:

ԱՌԱՏԱԶԵՆՈՒԹԵԱՐ ՄԵԺԱՅԱՐԳ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԳԵՐՃ
ՆԵՐՄԷՍ ՂԷԿԵ ՏԱՏԵԱՆ:

ԿՈՍՏԱՆԳՆՈՒԳՕՂԻՍ:

Ի ՏԳԱՐԱՆԻ 4. ԳԱՅՕՂԻ:


1858

891.99-2

կպ

Վ. Ի. Մ. Գ. Ի. Ն. Ի. Ա.

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ:



ՅՕՐԻՆԵԱՑ,

ՋՄԻԻՌՆԱՅԻ

Պ. ՍԱՐԳԻՍ Տ. ՄԱՐԳԱՐ ՎԱՆԱՆԴԵՑԵԱՆ:

ԱՌԱՏԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՄԵԾԱՅԱՐԳ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԳԵՐՃ
ՆԵՐՍԷՍ ՎԷԿԻ ՏԱՏԵԱՆ:



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ:

Ի ՏՊԱՐԱՆԻ Կ. ԳԱՅՕԼԻ:

1858

563

Handwritten text, possibly a title or header, appearing as a faint mirror image.

Handwritten text, possibly a date or reference number, appearing as a faint mirror image.

Large block of faint, mirrored handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly a name or address, appearing as a faint mirror image.

2886-57
8

8681

Աշխատիք Տէր :

Պեր ազգուսեր բնասորոսնեան անզոսգական աննոսագոյն յերտերը ակաս երկրորդ անգոս սրգիանճան ճարդկայնն բնասոր հորեղաննն ճլայ ակասն գեղանըոյը շնորհակարդիը . որոնցճոլ ճոսայեայը թոսարեղական երկրորդ աշխատոսնեան ակ ՎԻՐԳԻ ՆԻԱՆ արատրոսնեոսի 'ի լոյոս րնճայելոս ճարդասերեղիտ :

Աղակար գրիլը և անզըր իոստերոս յերասն անկարող են արտիո անկեղճո ոս երասիարայարոս ճլայոսճոերը ար Չերդ բարըր Աշխոսոսնեան յայտնելոլ ճոսասորիոս ցոյց արոսճո Չեր ճարդասերական շնորհակ ճլայ լոսոս ցրնն և արճանոսոր կերոնն ճարեը :

Ասոսոսորի եղէտ , ոս Աշխոսոսնեոս Տէր . որ ինկղեոս արոս գորճոս արոսղէնը ճլոսոս Չեր Աշխոսոսնեան արոսարայեան և արճուսեր բնասորոսնեան հանրեղելոս . ճոյնկեոս ակ ճլերղէնը ճլոսոսոս Չեր արոս աննոսական ճարճոսնոսը ճոսասորիոս արղոս ճլեր եղոս :

Ասոսորի ինոզէնոս րըոս շնորհակարոս ճանկնակոլ Չեր արոս ճարդասերական անոսորիոսրննելը շնորհակար հոսոսր՝ կը կնոսե իրակարոսգիլոս ոս անկեղճո ճլայոսճոանց րըոս հոսոսարիոսը արոս րոսակնոստեայ գրոսնեանն րը . և կը ճոսոս րըոս

Երասիարայարոս

և աննակրոնարկ ճոսոսայ .

Handwritten text, likely the beginning of a paragraph or section.

Handwritten text, continuing the narrative or list.

Handwritten text at the bottom of the page, possibly a signature or footer.

ՎԵՐԳՐՆԵՐԱՆ . ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ .

Ա Ն Չ Ի Ն Զ :

- ԱՊՊԻՈՍ . Տանապետ Հռովմայ :
- ԿՂՈՂԻՈՍ . Բարեկամ Ապպիոսի :
- ՎԻՐԳԻՆԵՐՈՍ . Հռովմայեցի Տարիւրապետ :
- ՎԻՐԳԻՆԵՒԱ . Վ իրգինիոսի աղջիկը :
- ԻԿԷԼԻՈՍ . Վ իրգինիայի հետ նշանուած :
- ՄԵՍԻԼԱ . Խնամածու Վիրգինիայի :
- ՆՈՒՄԻՏՏՈՐ . Եղբայր Վիրգինիոսի :
- ՍԳՐԱԴՈՆ . Որդի Նումիտորի :
- ԱՆՏՈՆԻՈՍ . Եղբայր Իկիլիոսի :
- ՏԱՐԻՈՆ . Պաշտօնակալ Ապպիոսի :
- Օ Խնուորներ պահապաններ և ուրիշ մարդիկ :

Տեսարանը Հռովմայ մեջ :

ԱՆՉՐԵՒՈՏ ՈՒ ԿԱՅԾԱԿՆԱԼԷՑ ԳԻՇԵՐ ԵՐ :

Ս իրգինիս պարտանի մը առջև կայնած :

ԱԻԳԻՆԻԱ :

Գիշերդ ահարկու . երբ պիտի վերջացնես քու այս զարհուրելի իշխանութեանդ տեսողութիւնը : (Ալբրտուայ) :

Բնութիւնը բոլորովին կերպարանափոխ եղած է , կամ երկնից մէջ պատերազմ կայ . և կամ աստուածներուն հոգմանէ մեր վրայ դալիք սուկալի պատժոյ մը նախազուշակութիւններն են ասոնք : Ս ան զի փորձուած բան է , որ ինչ ատեն դիք մահականացուները պատժել ուղեն , այսպիսի պատգամներ կը խրկեն իրենց պատժէն առաջ : Բայց ահաւասիկ մտածելու և սոսկալու բան : Արկնից որորնդօստ գտալը , շանթընկէց փայլատակութիւնը , տերեւթափ ուժգին անձրևը , ծառախիլ ու սպառնալից հովը . արդեօք ասոնց ամէնքը մի միայն մէկ մահականացուի մը դէմ սպառնալիքներ են , եթէ ոչ բոլոր Հոռովայ :

Ստուածները արդեօք մի միայն մէկ անձ մը պատժել կուզեն , եթէ ոչ բոլոր Հոռով ու մէջի բնակիչները իրենց ահեղաստատ բարկութեանը զոհել : Ահ , այնչափ անգութ չեմ կարծեր զիրենք . որ իրենց սիրելի քաղաքը մէջի մարդերով մէկտեղ կործանեն ու ոչնչացնեն : Բայց չեմ կարծեր ալ որ մէկ անձի մը դէմ այսչափ սպառնալիքներ ըլլան :

(Գաւթին ին իայլարալի «- Կորոսայ) :

ՎԻՐԳԻՆԻԱ.
ՄԵՍԻԱ.

Կը սխալըք մայր իմ, ես աղմուկ մը չ'հանեցի:
Ի՞նչպէս չէ, քունիս մէջէն յանկարծ ցատկեցի,
կարծելով թէ տանը մէջ գողեր կը գտնուին:
Աշրեք անգամ քեզ կանչեցի ու պատասխան
մը չ'տուիր: Շ խտակը զրուցէ, որո՞հ հեռ կը
խօսէիր:

ՎԻՐԳԻՆԻԱ.
ՁԵՍԻԱ.
ՎԻՐԳԻՆԻԱ.

Տարերաց հետ:
Ի՞չ ինչո՞ւ:
Որ ինձի այսչափ վախ պատճառեցին ու հանգր-
տուժեանս արդելք եղան: Շ խտակը խօսելու
համար սիրելի՛ մայր, այս գիշեր դեռ քնացած
չեմ, միտքս բոլորովին յուզուած էր, տարե-
րաց այսպէս իրար խտանուիլը սիրտս զարհու-
րեցուցին թէ ասոնք չարագուշակ սպաննալիք-
ներ կրնան ըլլալ, և եթէ ձեր երեք անգամ
կանչուուն չ'պատասխանեցի, մի կարծէք որ
գիտմամբ էր, հապա այնչափ խռոված էի, որ
ձայնին ընտանութիւնը և ուսկից դալը չ'կրցայ
ստուգել: Այերողամիտ եղիք սիրելի՛ մայրս, կը
տեսնէք որ վախս և կասկածս իրաւացի են:
Վուրք ալ նոյն զգուշութիւնը չ'ունեցա՞ք:

ՄԵՍԻԱ.

Ատանկ երկչոտ սիրտ մը չեմ կրեր որ բնական
բաները ինձ վախ պատճառեն, ափսոս որ շը-
ռովմայեցի ես, գնա՛ հանդատացիր քիչ մը դեռ
ըւսնալու երկու ժամ կ'ուզէ:

ՎԻՐԳԻՆԻԱ ԿԸ ՄԵՍԻԱ:

Թէպէտե քանացի անոր վախը փարատելու, բայց
ստուգիւ իմ սիրտս ալ կը գողայ. որովհետեւ
մարդիկ շատ անգամ ասոնք բնական բաներ են
ըսելով՝ սրտերնուն մէջէն բոլորովին երկիւղը կը
փարատեն, հետեաբար աստուածներուն դէմ
մեծ մեղք կը գործեն: Այն յանդուգն մահ-
կանացուն որ ասանկ տեսիլները բանի տեղ չի
գնելով՝ մէկ մէկ պատճառներ կը գտնէ. թող
աղէկ սովըի որ աստուածները ինչ ատեն բար-
կանան ու մեղմէ վրէժ առնուլ ուզեն, իրենց
գիտաւորութիւննին մահկանացու ականջներու

չեն գար չեն դրուցեր, հապա ասանկ տեսիլնե-
րով ու սպառնալիքներով առաջնն կիմացնեն :
Բայց կարծես թէ ամպերը կ'անհետանան :

(Պարտահանին էլ յօրէնայ :)

Այո՛, երկնից երեսը պարզութիւնը բոլորովին կը
տիրէ, արեգակն ալ ահա հաւասարիկ ծագելու կ'սկսի :
Ի՞նչ զարմանալի փոփոխութիւն, քիչ մը առաջ
երկնիս հիմէն կը շարժէր, և հիմա պայծառ ու
ժպտա կերպարանք մը կ'ստանայ : Կարծեմ թէ
դուռը կը չալուի : (Լէննջ էլ Գրէ :)

Այո՛ :

Ղարաբ էլ Բանայ :

ՆՈՒՄԻՏՈՐ ԵՒ ԱՆՏՈՒՆՈՍ ԿԸ ՄՏՆԵՆ :

ԵՐԿՈՒՔԸ .

Բարի լոյս, տիկին :

ՄԵՍԻԱ .

Բարի եկաք ազնիւ պարոններ :

ՆՈՒՄԻՏՈՐ .

Ի՞նչպէս անցուցիք այս գիշերը :

ՄԵՍԻԱ .

Մինչև առաւօտ վախի մէջ էի, և դրեթէ ամե-
նեին չ'ընացայ :

ԱՆՏՈՒՆՈՍ .

Դոյն վիճակը մենք ալ ունեցանք :

ՆՈՒՄԻՏՈՐ .

Քաղքին մէջ բաւական շէնքեր կործաներ, ու
շատ մարդիկ փլատակներուն տակ մնացեր են :

ՄԵՍԻԱ .

Յայտնի կը տեսնուէր որ ասանկ գէշ հետևու-
թիւն պիտի ունենայ :

ԱՆՏՈՒՆՈՍ .

Երանի՛ թէ աւելի գիշերը չ'յաջորդէին :

ՄԵՍԻԱ .

Կասկած մը ունէ՞ք այդ բանին վրայ :

ԱՆՏՈՒՆՈՍ .

Կասկած մը չ'ունիմ, բայց հիմակուան պարագա-
ներէն ասանկ կը գուշակեմ կոր :

ՆՈՒՄԻՏՈՐ .

Երէկ Հռովմայեցի մը տեսայ, զորն որ Ապպիոսին
հրամանաւ կախելու կը տանէին :

ՄԵՍԻԱ .

Եւ ինչու, յանցանքը ի՞նչ է եղեր :

ՆՈՒՄԻՏՈՐ .

Յանցանքը ճշմարտութիւնը խօսիլն է, ընկերու-
թեան մը մէջ Ապպիոսի բռնած անկարգ ըն-
թացքը վար կը զարնէ, այս բանս բռնաւորին
ականջը հասնելով՝ իսկոյն կը հրամայէ որ զայն
կախեն :

ԱՆՏՈՒՆՈՍ .

Չեմ կրնար ասանկ բռնաւորի մը անգթութեանց
համբերել : Ի՞նչպէս ապուշցիր են Հռովմայե-
ցիք . օրէնքը կը հրամայէ որ տասնպետ ընտ-

րուող անձը միայն տարի մը կառավարէ, բայց ասոր թոյլտուութիւն ընին երկրորդ տարի մ'ալ տասնպետութեան պաշտօնը վարելու, և ինչո՞ւ ի՞նչ բանի մէջ յաջողակ է. պատերազմի՞, բարեկարգութեան, խելացութեան. բնաւ . . . օրէնքը բոլորովին ոտքի տակ առած. ու իրեն կամակից մէկ քանի չարագործ անձեր ընտրելով՝ թալելու, սպաննելու, զեղխութիւններ ընելու ետեւ եղած է: Ինչո՞ւ կը համբերեն Հռովմայեցիք, որպէս զի Տարկուինեաց ժամանակի դժբաղդութիւնները յաջորդեն դարձնալ Հռովմայ մէջ:

ՆՈՒՄԻՏՈՐ. Իրաւամբ կը խօսիս, բայց ասանկ վտանգաւոր պարագայի մը մէջ այդ կերպ խօսքերը շատ գէշ հետևութիւններ կրնան ունենալ:

ԱՆՏՈՆԻՆՈՍ. Ար նայիմ որ Հռովմայեցւոյ մը կերպարանքը միայն կը կրես չէ՞ թէ սիրաք:

ՆՈՒՄԻՏՈՐ. Կ'անիրաւես զիս այդ խօսքովդ, Ա'նտոնինոս, զիտցած ըլլաս որ պատերը երբեմն ականջ կ'ունենան. թէ որ այդ խօսքերդ Ապպիոսի ականջը հասնին՝ պատասխանդ մահ է, կենացդ պիտի վնասես:

ԱՆՏՈՆԻՆՈՍ. Այո՛, ստոյգ է, կենացս կը վնասեմ, բայց հայրենեացս կ'օգնեմ. այս կերպ մահը ինձի համար պատիւ մընէ: Անանքդ աւելի շատ կը սիրես եթէ ոչ հայրենիքդ:

ՆՈՒՄԻՏՈՐ. Արկուքն ալ:

ԱՆՏՈՆԻՆՈՍ. Ատիկայ կը նշանակէ որ և ոչ մէկը կը սիրես: Ես իմ հայրենիքս իմ անձէս աւելի շատ կը սիրեմ. և ատիկայ է մարդու մը առաջին պարտաւորութիւնը: Ինչո՞ւ կը վախնաս բռնաւորի մը դէմ խօսելու, եթէ հայրենասէր ես, պէտք չէ՞ որ երկչոտութիւն ունենաս, եթէ ոչ հայրենասիրութեան առաքինութիւնդ կ'ապակասես: Ա'տի չունիմ ես բնաւ, պատրաստ եմ իմ անձս զոհելու այն բանին համար՝ ուսկից հայրենիքս օգուտ մը կրնայ քաղել, բայց առանց օգտի մը զոհելն ալ յետին անմտութիւն կը սեպեմ:

ՆՈՒՄԻՏՈՐ . Ե՛ցն անմտութիւնը ունեցաւ երեկուան անձն ալ որ իր ազատութեանը զո՛Տ եղաւ :

ԱՆՏՈՆԵՆՈՍ . Ե՛ս քու բարեկամութիւնդ իփրձած եմ, կասկած մը չունիմ որ իմ բերնէս արտասանուած խօսքերը վտանգաւոր անձերու կը հաղորդես, բայց այն ալ քեզ կ'իմացնեմ որ հաղորդո՞ս անգամ՝ ինձ մնաս մը չես կրնար պատճառել . արդէն քեզի ըսի որ պատրաստ եմ հայրենեացս համար անձս վտանգի մէջ դնել :

ՆՈՒՄԻՏՈՐ . Ե՛թէ զիս քու բարեկամդ կ'անուանես, ուրեմն ես քեզի կ'ըսեմ որ ատոնք բարեկամի մը ուղղուած խօսքեր չեն : Ինչո՞ւ ատանկ տարութեամբ կը խօսիս . մի՞թէ կեանքէդ զրուած ես որ ատանկ կ'արտօրաս զայն վտանգի մէջ դրնել . հայրենասիրութիւնդ գովելն է, բայց բարեկամաբար կը խօսիմ որ սո՞ք յանդգնութիւնդ ալ պարսաւելի է .

ԱՆՏՈՆԵՆՈՍ . Բայց ո՞վ կրնայ համբերել այս կերպ անգթութեանց :

ՆՄԻՄԻՏՈՐ . Ե՛ւ ո՛չ մէկը :

ԱՆՏՈՆԵՆՈՍ . Ուրեմն ի՞նչպէս կը համբերես դուն :

ՆՈՒՄԻՏՈՐ . Ե՛ւ յղպէ՛ս կը կարծես Անտոնինոս, դուն որ իմ անկեղծ բարեկամն, ես իմ սիրտս նայիլ պէտք է իր, չէ՛ թէ բերնիս լուութիւնը . լեզուս չ'խօսիր, բայց սիրտս դառնասպէս կը հեծէ : Աստուածներո՞վ, այս դաշտնիս վրայ և քու առջևդ կերդնու՞մ, որ եթէ պատե՛հ առի՞թ գտնելու ըլլամ՝ չէ՛ թէ միայն իմ միակ կեանքս, հասցած է որ այս գլխու մտկերուս չափ կեանքեր ունենայի անգամ՝ պատրաստ էի զանոնք հայրենեացս սիրոյն համար դո՛հել, իմացա՞ր հիմա զիս : Բայց դուն պէտք չէ՛իր ստիպել զիս որ այս կերպ խօսիմ, պէտք չէ՛իր ստիպել զիս որ այս կերպ իմ անձիս վրայ պարծիմ : Խո՛հմութիւնը եթէ գործքի մը մէջ մարդուս առաջնորդը չ'ըլլայ, նոյն սկսած գործքին մէջ անգունդէ անդունդ կը գահավիժի : Ա՛յնչէ՛ս որ երթամ ազատ բազուկով դաշտնս բացուած Ապպիտոսի առջև ել-

նեմ ու խիստ յանդիմանութիւններ ընեմ ա-
նոր. բայց ասիկայ անմտութիւն է չէ թէ քա-
ջասրտութիւն, յիմարութիւն չէ թէ հայրենա-
սիրութիւն:

ՄԵՍԻԱ. Աղնիւ պարոններ, ինչո՞ր համար այդ կերպ բար-
կութեամբ կը խօսիր:

ՆՈՒՄԻՏՈՐ. Երեցեք տիկին, եթէ ձեզ դիտու ցաւ պատճա-
ռեցինք:

ՄԵՍԻԱ. Չէ, ամենեին, թէպէտ և օգտակար խօսակցու-
թիւններ են ատոնք. բայց ըստ մասին վնասա-
կար ալ, այնպէս չէ՞ պարոն:

ՆՈՒՄԻՏՈՐ. Ղատողութիւննիդ շատ իրաւացի է տիկին:

ՄԵՍԻԱ. Ինձ անանկ կ'երևայ. որովհետև աղէկ կը յիշեմ
որ այս կերպ խօսակցութենէ շատ անգամ վնաս
յառաջ եկած է:

ՆՈՒՄԻՏՈՐ. Ե՛ս ալ նոյն կարծիքէն եմ:

ՄԵՍԻԱ. Աղնիւ պարոններ, ձեզի հետ երկու ամենահար-
կաւոր խօսք ունիմ, կը բարեհաճիր անգամ մը
սենեակս գալ:

ԵՐԿՈՓ. Է՛ւ աճու թեամբ տիկին:

ԿԸ ՄԵՎԵՆ. Ե



Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի :

Վ Ի Բ Ք Ի Ն Ե Ը Կ Ը Մ Տ Ն Է Զ Ե Ռ Բ Ը Ն Ե Մ Ը Կ Ո Վ Մ Ը :

Վ Ի Բ Ք Ի Ն Ե Ը. Ի՞նչ աղնիւ սիրտ, այս առտու փութացեր է իմ
անհանգստութիւնս ու վախս փարատելու իր
սիրալիր նամակով:

(Նամակը իբրևայ ու իբրևայ):

Վ արդարեղ և աղնիւ վերդինիս:

Վ Ես նամակը ուրիշ բանի համար չեմ ուզիր
«քեզ, բայց եթէ սիրտդ հանգստացնելու, թէ
«որ երեկ գիշերուան խառնակութենէ վախ մը
«զգացած ես: Թող ընական փոփոխութիւն-

“ները քեզ վախ չ'պատճառեն, թէպէտև եր-
“բեմն տարօրինակ ու ահարկու կ'ըլլան: Բայց
“ասոնք չէ՛ թէ 'ի խրատ քեզ կը խօսիմ, ազ-
“նիւ ձ'իրգինիս, ապահով եմ որ ինչպէս չըք
“նաղ կերպարանքդ բոլոր Հոովմայ մէջ հազ-
“ուազիւտ է, նոյնպէս ալ անվնհեր ու ազնիւ
“սիրտդ չնաշխարհիկ. հապա քու վրագ ունե-
“ցածս անհամեմատ սէրէն ու պարտաւորութե-
“նէն ստիպեալ՝ այս խօսքերը կը գրեմ, զորոնք
“կ'աղաչեմ իմ սիրոյս համար քանի մը վայր-
“կեան կորսնցուցէք ու կարդացէք:

Մ. յս դիպուածները քեզ դաս մը ըլլան որ եթէ
“ուրիշ փորձութեանց ու ներդրութիւններու հան-
“դիպիս, արդէն սովորած ըլլես անոնց համբե-
“րութեամբ տանելու ու չ'վհատելու: Փորձ-
“ուած բան է որ բաղդը միշտ իր խաղը սիրա-
“հարներու վրայ կը խաղայ, ու ամենէն շատ
“զանոնք կը փորձէ կերպ կերպ տառապանք-
“ներով: (Ալ դարդէ՛ կարդալէ:)

Մ. յս խօսքերը ինձ կասկած կը պատճառեն. ինչո՞ւ
արդեօք այս կերպ կը խօսի. դժբազդութիւն մը
կը գուշակէ՞ որ առաջէն զիս քաջալերելու կը
փութայ, տեսներ: (Ա՛հի՛ կարդալէ:)

“Բայց ասոնք ըսելով մի գիտնար որ բանէ մը կը
“կասկածիմ, ամենեւին. ապահով եղիր որ մեր
“սիրոյն զիմահար արդելք մը չ'կայ ու չ'կրնար
“ըլլալ. ամէն կողմ մեզի համար խաղաղ է,
“ու մենք հանդիստ, ազատ, ու երջանիկ: Մ.
“մենազնիւ ձ'իրգինիս, չեմ կրնար իմ ան-
“պատմելի զգացումներս այս գրիս մէջ բովան-
“դակել: Բ՞նչպէս զքեզ տեսնելու կը բաղ-
“ձամ, կարծես թէ իմ քեզի հետ վերջին տե-
“տութենէս 'ի վեր տարիներ անհետացեր են.
“բայց խօսք կու տամ այս գիշեր գալ զքեզ տես-
“նելու ու հաւատելու որ քու վրագ ունեցածս
“սիրոյն վրայ հաստատ եմ ու պիտի ըլլամ մինչև
“ցմահ”:

Արդէն ապահով եմ քեզմէ, ազնիւ սիրտ :

(Սամաիւ Գոցելու):

Ե՛ս ալ անհամբեր քու գալըստեանդ կ'սպասեմ :
Օ իս վերջին անգամ տեսնելէդ 'ի վեր տարիներ
անհետացեր են կ'ըսես. բայց ե՛ս կ'ըսեմ որ դարեր
գլորած են չէ թէ տարիներ : Ե՛ս քեզմէ շատ
կ'անձկամ զքեզ տեսնելու . առանց քու ներկա-
յութեանդ առաւօտը ինձի համար անլոյս է և հա-
ճութեան չորամառեր : Քայց զիշերը , ամենա-
տխուր գիշերը անգամ քեզմով լուսաւոր է ինձի
համար :

(Գարսեհ .)

Սիրգինիա :

ՎԻՐԳԻՆԵՒԱ :

Հիմա կու գամ . մայր իմ : Ե՛՛հ . կարծես թէ սի-
րոյս առարկան հոս է . ու չեմ կրնար այս տեղէն
զատուիլ :

(Սամաիւ Գրգռեւ Լեւնէ):

(Գարսեհ .)

Սիրգինիա :

ՎԻՐԳԻՆԵՒԱ .

Եկա՛յ , մայր . — Ո՛ր էր որ Իկիլոսին ձայնը ըլ-
լար ասիկայ :

(Կլ Դէն):

ՎԱՐԱԳՈՅԸ ԿԸ ԳՈՑՈՒՒ :

ԱՐԱՐԱՒԱՅ Բ :

ՏԵՍԱԲԱՆ Ա :

ՎԻՐԳԻՆԵՒԱՍԻ ՏԱՆԸ ՄԷՋ ՊԱՐՏԷՋ ՄԸ :

Ի՛նչուս արտաբանէն անյայտ ծառի մը ետեւ ի՛նքի :

ԻԿԻԼԻՈՍ .

Հողմու՛նք կոհակք համօրէն՝
աշխարհ 'ի խոր լու՛թիւն ,
մարդիկ գոյակք բաց յինէն
կան հանդարտիկ քաղցր 'ի քուն :

Ի պարտիզին ծաղկաւէտ,
 զօրէն մեղուոյ որոնեմ
 զվարդն անոյշ հոտաւէտ,
 զՎիրգինիա գեղաղէմ :

Ի ուսինդ պայծառ երկրաւոր,
 որ քան զԵրկնիցն գեղաշուք,
 ցերբ յայս վիճակ յանանգորբ
 կացից 'ի մութ մահաշուք :

(Սրբան կենեկ :)

Ի զյս մը կը տեսնեմ այս պատուհանին մէջ, բայց
 Վիրգինիա չ'երևար : — Վիրգինիա, Իկիլիոս
 կէս գիշեր ժամանակ պարտեղներու մէջ կը թա-
 փառի . չնս ցուցներ անոր քու գեղեցիկ ու յա-
 փըշտակիչ դէմքդ :

(Վայրկեան մը Լուս կենեայ :)

Վերևայ թէ սենեակը չէ : — Ինչ զարմանալի
 բան է սիրոյ զգացողութիւնը, մարդս առիւծ
 մը կը դարձնէ . պատերէ, աշտարակներէ ու
 բերդերէ վեր հանել կուտայ . ու ան աստիճան
 կ'աշխուժցնէ, որ մարդս մինչև անգամ աշխար-
 հիս մէջ ամենէն զօրաւոր և ուժգին բանին
 դէմ դնել կ'ուզէ առանց իր կարողութեան նա-
 յելու . և ստուգիւ յոժ ալ կ'ստանայ : Եյս
 պարտիզին բարձր պատերը սոսկումն կրնային
 պատճառել ինձ՝ թէ որ Վիրգինիայի սէրը չ'ըլ-
 ար : Վարժեմ դուռը կը բացուի, ուրեմն տեղ
 մը պահուիմ, չըլլայ թէ Միսիլա մտնելով պա-
 տուհանէն զիս տեսնէ :

(Օտար մը ետև կը պահուի :)



Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ :

Վ Ի Բ Գ Ի Ն Ի Ա Ս Ե Ն Ե Կ Ի Ն Մ Է Զ

Վ Ի Բ Գ Ի Ն Ի Ա .

(Պարոտանին վար նայելով) Ղևոռ չէ եկած, ինչո՞ւ այսչափ ուշացաւ. արդեօք պիտի չ'դա՞յ, բայց չեմ կարծեր, իր խօսքին վրայ հաստատ կը կենայ. այսօրուան խրկած նամակին մէջ զրուցեր էր որ այս գիշեր անպատճառ պիտի գայ, ու ես կ'սպասեմ մինչև անոր գալը :

(Երբ ինչ որսէն) :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ :

Ի Կ Ի Լ Ի Ո Ս Ե Բ Ե Ի Ա Ն Կ Ե Լ Ն Է

Ի Կ Ի Լ Ի Ո Ս .

(Կոմս) Ո՞վ էր արդեօք ներս եկողը, Մեսիլա պիտի ըլլայ : Ուրեմն աւելի աղէկ է լուռ կենալս, ի՞նչպէս սիրտս կը բարախէ :

Վ իրզինիա, մի տանջեր զիս քու սիրոյդ բռնութեամբը : Արեցնուր այն քու չքնաղ կերպարանքդ, որուն աստուածները անգամ կը նախանձին : Մի թողուր որ աւելի շատ մթութեան մէջ դեղերիմ, երեցիր, որ քու սիրուն զիմացդ պայծառութեամբը գիշերուան խորին մթութիւնը փարատի :

(Վ իրզինիա վերէն կ'սկիւն երգել նոստաբարանով) :

Մ. Տ. . . Վ իրզինիան է . . .

(Պարոտանին աւելի ինչ որսէն) :

Վ Ի Բ Գ Ի Ն Ի Ա .

(Լուսնոյ որսնուելու) :

Ո՞վ, զիտրդ ծանր ինձ այս միճակ .

Ի կիլիսոս զիւրն հեշտալուր

ձայն անուշակ իբր զսոխակ

հնչէ ո՞չ աստ, աւանդ յայլուր :

Բանդա անողոք, ցեղը զնդկելիս
'ի հոգս 'ի ծուփս անմխիթար.
սէր Իկիլեայ զերթ բոցավառ
ջահ 'ի սրտիս վառի 'ի վառ:

Ո՞վ, զի՞արդ ծանր ինձ այս վիճակ.
Իկիլիոս զիւրն հեշտալուր
ձայն անուշակ իբր զսոխակ,
հնչէ ոչ աստ, աւաղ յայլուր:

ԻԿԻԼԻՈՍ .

(Սրբէն :)

Ո՞վ . զի՞արդ քաղցր ինձ այս վիճակ .
Վիրգինիա զիւրն հեշտալուր
ձայն անուշակ իբր զսոխակ,
'ի պարտիղես հնչէ ընդոյր :

(Վիրգինիա պարտիղեսն վեր էլ նայէ :)

ՎԻՐԳԻՆԻԱ .
ԻԿԻԼԻՈՍ .

Ո՞վ է որ իմ ձայնիս արձագանքը կուտայ :
Ընկիսյ, որուն սիրոյ արձագանքը տալ ուխտե
ցիր : Վիրգինիա, երկու ժամ է որ պարտի
զին մեջ կը թափառիմ :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Իկիլիոս, երեք ժամ է որ անհամբեր քու գա-
լըստեանդ կ'սպասեմ :

ԻԿԻԼԻՈՍ .
ՎԻՐԳԻՆԻԱ .

Ըհաւաստիկ եկայ :
Ե՛ս ալ եկայ :

(Տեսարանը փերևայ :)

ԻԿԻԼԻՈՍ .

Ի՞նչպէս խորին լուսթիւն կը տիրէ, կը սոսկամ
ես առանձին գալելու, գուն ի՞նչպէս ասանկ
ժամանակի մը մեջ չես վախնար պարտիղին
պատերէն վեր մագղցելու :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Վիրգինիա վախ մը չ'ունիմ, ըստ որում աղէկ
զինեալ եմ :

ԻԿԻԼԻՈՍ .

Ի՞նչպէս աղէկ, ընդ ամէնը մի միայն մէկ դաշտն
մը կը կրես վրագ :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Կը սխալիս :

ԻԿԻԼԻՈՍ .

(Ընկէ՛ր վրան էլ նայէ :)

Պարապ տեղը մի փնտռեր, մինակ այս դաշտնը

- ՎԻՐԳԻՆԻԱ . Ուրեմն ի՞նչպէս կրնաս ըսել որ աղէկ զինեալ եմ :
 ԻԿԻՒԼԻՈՍ . Եթէ չ'ըլլամ չեմ ըսեր :
 ՎԻՐԳԻՆԻԱ . Բայց
 ԻԿԻՒԼԻՈՍ . ((Ինքնօրէն)) Այլ իրգինիա , սիրջ զօրաւոր զէնքերով պատասպարուած , չէ՛ թէ միայն պատերէ վեր մագլցելու , հապա կատաղի դազաններու դէմ գնելու անգամ քաջասրտութիւնը կրնամ ունենալ : Եթէ դուն իմ սէրս փորձել կ'ուզես , պարտիզին պատերը զօրաւոր ապացոյցներ կրնան ըլլալ :
- ՎԻՐԳԻՆԻԱ . Ըրդէն զքեզ փորձած եմ , հարկաւորութիւն չ'ունիմ նորէն փորձելու :
- ԻԿԻՒԼԻՈՍ . Օ՛հա կը սիրեմ :
- ՎԻՐԳԻՆԻԱ . Ինչո՞ւ համար ատանկ հարցում մը կ'ընես , կասկած մը ունիմ իմ վրաս :
- ԻԿԻՒԼԻՈՍ . Ըմենեհին :
- ՎԻՐԳԻՆԻԱ . Ինչո՞ւ ուրեմն կը հարցնես :
- ԻԿԻՒԼԻՈՍ . Կ'ուզէի գիտնալ :
- ՎԻՐԳԻՆԻԱ . Մինչև հիմա չէիր գիտեր :
- ԻԿԻՒԼԻՈՍ . Գիտէի , ապահով եմ , բայց կ'ուզեմ աւելի ապահով ըլլալ : Բու չ'պատասխանելը ինձ կասկած մը կը պատճառէ որ զիս այնչափ աղէկ չես սիրեր , որչափ որ ես զքեզ :
- ՎԻՐԳԻՆԻԱ . Եթէ սէրը տեսնելի կամ շոշափելի բան մը ըլլար , պիտի տեսնէիր որ իմ և քու սիրոյդ մէջ տեղը որչափ տարբերութիւն կայ :
- ԻԿԻՒԼԻՈՍ . Ըտինքն իմն շատ է :
- ՎԻՐԳԻՆԻԱ . Կը սխալիս :
- ԻԿԻՒԼԻՈՍ . Ուրեմն պատասխանէ՛ հիմա , զիս բոլոր սրտանց կը սիրեմ :
- ՎԻՐԳԻՆԻԱ . Ըտ՛, ապահով եղիւ որ կը սիրեմ :
- ԻԿԻՒԼԻՈՍ . Երբմեցիք ուրեմն որ մինչև ցմահ այդ սիրոյն վերայ հաստատ պիտի կենաս :
- ՎԻՐԳԻՆԻԱ . Ըտուածներով . . .
- ԻԿԻՒԼԻՈՍ . ((Ինքնօրէն)) Բաւական է :
- ՎԻՐԳԻՆԻԱ . Ը՛հ . . . Ի՞նչ արտասուաց կամիլներ կ'ն որ այտերուդ վրայ կը տեսնեմ , ասոնք ի՞նչ կը նը-

շանակեն, Ի՛կիլիոս : Ղան գաղանիք մը ունիս
բայց ինձ չես հաղորդեր : Այրեկուան գրած
նամակիդ մէջի խօսքերն ալ ինձ բաւական կաս-
կած պատճառեցին : Բ՛՛՛՛. այդ լուծիւնը -
ինչո՞ւ չես խօսիր : Ի՛նչ սիրող ինձ Ի՛կիլիոս,
այն ազնիւ սիրտը, որուն մէջի գաղանիքները
ինձ ալ ծանօթ ըլլալ պէտք էին :

Ի ԿԻԼԻՈՍ .

Գաղանիք մը չ'ունիմ՝ Վիրգինիա :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Աւելի ազէկ ունիմ՝ որ ինձ մեռիր ըսես քան թէ
զիս մի սիրեր :

Ի ԿԻԼԻՈՍ .

Ուրեմն իմ սիրոյս համար կ'աղաչեմ ներէ՛ ար-
տասուացս, որոնք առանց պատճառի կը թա-
փին :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Առանց պատճառի արտասուք չ'իծափիր, Ի՛կիլիոս,
եթէ չես ուզեր քու գաղանիքդ ինձ յայտնել,
ուրեմն ըսել է որ զիս չես սիրեր :

Ի ԿԻԼԻՈՍ .

Ի՛րեզմէ զատ ուրիշ սիրոյ առարկայ մը չ'ունիմ :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Ուրեմն զրուցէ՛ ի՞նչ է արտուծեանդ պատճա-
ռը. զէմքդ խոսիւած է, աստուածներուն աւ-
ղաչէ, վտանգ մը չ'կայ :

Ի ԿԻԼԻՈՍ .

Ա՛փոսո՛ւ. բաւական վտանգ կայ :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Ա՛ւ ի՞նչ է եղած վտանգը, որմէ այսչափ կը վախ-
նաս :

Ի ԿԻԼԻՈՍ .

Այրեկուքնիս ալ թշնամի մը ունինք որ զմեզ կոր-
ծանելու կը ջանայ :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Հոռովմայ մէջ բաւական զօրաւոր մէկը չ'կայ, որը
կարող ըլլայ զմեզ կործանել :

Ի ԿԻԼԻՈՍ .

Կրնայ դանուիլ, Վիրգինիա :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Ա՛ւ ո՞վ է :

Ի ԿԻԼԻՈՍ .

Ի՛նչաւորը :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Ա՛յպիսի :

Ի ԿԻԼԻՈՍ .

Ա՛յո՛ :

(Այլ ուրիշ ալ կը լսէն :)

ՎԻՐԳԻՆԻԱ .

Բայց ինչո՞ւ, ի՞նչ պատճառ կրնայ ունենալ Ապ-
պիոս մեղի դէմ թշնամի ըլլալու : Իրեն վնաս
մը կամ նախատիք մը հասուցած ես :

Ի ԿԻԼԻՈՍ .

Ո՛չ, ամենեին :

ՎԻՐԳԻՆԻԱՆԻ
ԻԿԻԼԻՈՍ .

Ուրեմն ի՞նչ է պատճառը :
Պատճառը քու գեղեցկութիւնդ է : Վիրգինիա,
Վիրգինիա, անանկ կը գուշակեմ որ գերեզ-
մանիս կափարիչը բացուած է, ու քիչ մը
վերջը երկրիս տակը եղած ջրոց անդունդնե-
րուն մէջ պիտի մանեմ, խորասուզիմ ու կոր-
սուիմ : Ատրովպէ իմ կենացս թեւը կարեւու-
կը փութայ :

ՎԻՐԳԻՆԻԱՆԻ .

Իայց ինչո՞ւ ասանկ տարօրինակ կը խօսիս, Իկի-
լիոս :

ԻԿԻԼԻՈՍ .

Օ՛խ շուտով պիտի թողուս :

ՎԻՐԳԻՆԻԱՆԻ .

Ի՞նչպէս :

ԻԿԻԼԻՈՍ .

Աւելի նախամեծար պիտի ընտրես արնուական
տասնպետի մը հետ ամուսնանալ, քան թէ Ի-
կիլիոս անուամբ երբեմն տրիրունի մը :

ՎԻՐԳԻՆԻԱՆԻ .

Ղշմարիտ կըսեմ որ ըսածներէդ բան մը չեմ
կրնար կոր հասկնալ :

ԻԿԻԼԻՈՍ .

Ժամանակը պիտի հասկցնէ ու փորձէ :

ՎԻՐԳԻՆԻԱՆԻ .

Ի՞նչ բանը :

ԻԿԻԼԻՈՍ .

Հաւատարմութիւնը :

ՎԻՐԳԻՆԻԱՆԻ .

Որո՞ւ :

ԻԿԻԼԻՈՍ .

Վիրգինիայի :

ՎԻՐԳԻՆԻԱՆԻ .

Ասանկ բերան մը երբէք գործածած չէիր դուն,
Իկիլիոս :

ԻԿԻԼԻՈՍ .

Ասանկ զէպք մը երբէք պատահած չ'ունէր,
Վիրգինիա :

ՎԻՐԳԻՆԻԱՆԻ .

Կ'աղաչեմ միտքդ յայտնապէս ինձ իմացուր :

ԻԿԻԼԻՈՍ .

Ապփիոս քու գիմացդ գեղեցկութենէ յափշտակ-
ուած քեզի հետ ամուսնանալ կը ցանկայ :

ՎԻՐԳԻՆԻԱՆԻ .

Ամուսնանալ . . . Ապփիոսի՞ հետ . . . բայց
ի՞նչպէս կրնայ ըլլալ, արնուականաց արգիկեալ
է հասարակ ժողովրդեան հետ ինամութիւն
ընել :

ԻԿԻԼԻՈՍ .

Ի՞նչու որի մը ձեռքէ ամէն բռնութիւն կուգայ :

ՎԻՐԳԻՆԻԱՆԻ .

Իայց զիս ո՞ր տեսած է :

ԻԿԻԼԻՈՍ .

Անոր աչքերը ամէն տեղ կը տեսնեն : Օ՛խ
պիտի թողուս Վիրգինիա, պիտի դադրիս ա-

նանկ անձ մը սիրելէ, որ բոլորովին ինքզինքը քեզի նուիրած է: Պիտի ձգես զիս այն սուկալի յուսահատութեան մէջ, որ այս դաշտնով իմ դժբաղդ կեանքս վերջացնեմ: Պիտի պատճառես ինձ այն ահոնքի երազը, որ երեւակայութեան վիճերուն մէջ քու նուիրած սիրոյդ յիշատակներովը նեղուիմ: Պիտի ամիտիւս իմ երիտասարդ մարմինս փոքրիկ բայց յարասեւ սափորի մը մէջ, որ քու աղեկէզ սիրոյդ համար անելանելի պատերէ վեր ելած է:

(Ա իրէնիս աչերը ին քոյէ ու կուտայ:)

Ա իրզինիա, վ իրզինիա, թէ որ ասոնք պիտի ընես, (բաշտը տալել) ուրեմն թող Իկիլիոսի բերանը ճիշդ այս բողբոսի մէջ գեռ քու սերէդ չզրկուած՝ իր կենաց պատմութիւնը վերջացնէ:

(Ա՛ ուղէ ինչէն շուրիէլ:)

Վ.Ի.Բ.Գ.Ի.Ն.Ի.Ա. Ը՛Տ

(Իսկոյն Իկիլիոսի ինչն ին քոյէ ու կուտայ:)

Ի.Կ.Ի.Լ.Ի.ՈՍ. Թող զիս վ իրզինիա, աւելի աղէկ է որ հիմա իմ կեանքս վերջացնեմ, քան թէ վերջէն քու անհաւատարմութիւնդ տեսնելով:

Վ.Ի.Բ.Գ.Ի.Ն.Ի.Ա. Բայց ո՞վ ըսաւ որ քեզի հաւատարիմ պիտի չ'մընամ:

Ի.Կ.Ի.Լ.Ի.ՈՍ. Ըսիկայ յայտնի բան մըն է:

Վ.Ի.Բ.Գ.Ի.Ն.Ի.Ա. Աթէ վ իրզինիա դադրի զԻկիլիոս սիրելէ, ու իր նուիրական սերը բռնաւորի մը տայ, գո՛ւք անմահ աստուածներ, պատրաստ եղիք նոյն բողբոսի որ իր հաւատարմութեան խոստումը իրզէ, շանթակէզ ընելու ու մոխիր դարձնելու զայն:

(Գ.Ն.Ր.Բ.Ե.Ն.) Ա իրզինիա:

Ե.Բ.Գ.ՈՒ.Ք.Ն.Ի.Ն. Ը՛Տ

Վ.Ի.Բ.Գ.Ի.Ն.Ի.Ա. Մօրս ձայնն է, Իկիլիոս, պահուէ շուտով տեղ մը: (Իկիլիոս ին պահուի:)

(Գ.Ն.Ր.Բ.Ե.Ն.) Ա իրզինիա:

Վ.Ի.Բ.Գ.Ի.Ն.Ի.Ա. (Ըսանց պարասիտներու կասաց ին իր սէնէտիլը կ'երկայ:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ :

Մ Ե Ս Ի Լ Ա Կ Ը Մ Տ Ն Ե

- ՄԵՍԻԼԱ . Ի՞նչպէս մտած է հոս տեղին ալ : Ա իրզինիա :
- ՎԻՐԳԻՆԻԱ . (Պատրիարքին հարցնելով) Հա՛ . . . ո՞վ է որ զիս կը կանչէ :
- ՄԵՍԻԼԱ . Ա իրզինիա, ո՞ր ես :
- ՎԻՐԳԻՆԻԱ . Հո՞ս եմ, մայր :
- ՄԵՍԻԼԱ . Ինչո՞ւ կը պօռայիր :
- ՎԻՐԳԻՆԻԱ . Հանգստութիւնս աղէկ վիճակի մէջ է :
- ՄԵՍԻԼԱ . Ի՞նչ ունիս դարձեալ :
- ՎԻՐԳԻՆԻԱ . Այս գիշեր երևակայութիւնս բոլորովին խանգարուած է, քնացածս ժամանակ տարօրինակ երազներ կը տեսնեմ :
- ՄԵՍԻԼԱ . (Սէնտիմենտալ) Այրահարաց սուրբական վիճակը ափսոսանք է : — Ի՞նչ ալ սոսկալի մտածիւն կը տիրէ : Աստուածներուն յանձնելով ինքզինքդ զնա՞ հանգստացիր, դեռ կէս գիշերը մէկ ժամ մը անցած է :

(Սէնտիմենտալ :)

Քանի մը օր է որ զիկիլիոս տեսած է, և անոր համար երևակայութիւնը կը խանգարի :

ՄԵՍԻԼԱ ԿԸ ՄՏՆԵ :



Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե :

ՎԻՐԳԻՆԻԱ ԿԸ ՄՏՆԵ :

- ՎԻՐԳԻՆԻԱ . (Կարծեցիկ) Ի՛կիլիոս . . . — Արդեօք զնա՞ց : Չեմ կարծեր որ առանց զիս վերջին անգամ տեսնելու երթայ : — Ի՛կիլիոս ելեր :

ԻԿԻԼՅՈՍ ԿԵՐԵՒԱՅ :

Կարծեցի որ դացած ես :

ԻԿԻԼԻՈՍ .
ՎԻՐԳԻՆԻԱ .

Մասնաց զքեզ բարեկրու :
Վիտեմ որ այդ աղնիւ բնութիւնը ունիս . բայց քանի մը անգամ կանչեցի ու չպատասխանելուդ համար ասանկ խորհուրդ մը մտքէս անցաւ :
Նոգ չէ : յամանակը կը մօտենայ որ քեզմէ բաժնուիմ Վիրգինիա , բայց չէ թէ սրտով : Մասնաձին մնացածդ ժամանակ շատ կերպ խորհուրդներ մտքէդ պիտի անցնին , և քու հաւատարմութիւնդ հիմէն խախտելու համար շատ զըզիւներ պիտի տան քեզի . բայց սիրտս հետդ կը թողում , և քու մտքէդ անցած բոլոր օտար խորհուրդներուն համար անիկայ թող քեզի դատասաղ ըլլայ : Անգստացուր , ապահով ըրէ զես Վիրգինիա , որ պիտի չ'դադրիս զես սիրելէ . քեզի համար մինչև անգամ պատրաստ եմ անձս զոհելու :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Նշյնը ես ալ . Իկիլիոս : Վեզմէ նոյն ժամանակը պիտի ստիպուիմ ցաւով բաժնուիլ . ինչ ատեն մահուան կէտը հասած՝ զես փոշիացնող խարոյկը բոցաւորի ու Չեր աղնիւ պատերուն վրայ եղած արտասուաց կաթիլները իբրև մարգարիտ փայլեցնէ , բայց սէրս յաւիտեան քեզմէ անբաժանելի է :

ԻԿԻԼԻՈՍ .

Նշյն խարոյկը առաջ զես պիտի այրէ , ու շատ տարիներէ վերջը զքեզ . որպէս զի քու մահդ չ'տեսնեմ : Վիշեր բարի . աղնիւ Վիրգինիա . զքեզ ու զես աստուածներուն խնամոցը կը յանձնում : Մահաւասիկ սիրտս հանգստացած ալ մէկ բանէ մը երկիւղ չ'ունիմ , քանի որ Վիրգինիա զես կը սիրէ ու պիտի սիրէ , ուրեմն աշխարհիս մէջ ալ ուրիշ բանի մը չ'եմ ցանկար . Վիրգինիա ամէնն է , ու ամէնը Վիրգինիա : Օ՛հա մտքէդ մի հաներ . աստուածներէն անդորր հանգստութիւն կը մաղթեմ քեզի համար : Վիշեր բարի :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Բարի գիշեր , ամենազնիւ Իկիլիոս , կարծես թէ սիրտս քեզի հետ առած կը մեկնիս : Մպահով

եղիր . քեզի պէս անձ մը չեմ գազրիր սիրելէ ,
դքեղ չեմ թողուր բնաւ . դաժան Ատրովպէ
միայն զմեզ մէկզմէկէ կրնայ բաժնել . երթաս
բարեաւ . աստուածները հետզ ըլլան :

ԻԿԻԼԻՈՍ ԿԸՄԵԿՆԻ :

ՎԱՐԵԳՈՅԻԸ ԿԸ ԳՈՅՈՒԻ :

ԱՐԱՐԱՒԱԾ Գ :

ՏԵՍԱՐԱՆ Ա :

ԱՊՊԻՈՍԻ ՊԱԼԱՏԸ :

ԱՊՊԻՈՍ ԿԸՄՏԵ :

ԱՊՊԻՈՍ .

(Ա. 13) Այս չքնաղ օրհորդին գեղեցկութիւնը
սիրտս սաստիկ գրաւած է , բայց դժուարու
թիւնը հոս է որ արնուականաց արգելք կայ
հասարակ ժողովրդեան հետ խնամութիւն ը
նելու : Բայց չեմ կարծեր որ Ապպիոսի գէմ
մեծ արգելքներ կրնան պատահիլ : Այսինք
կողովոս ինչ լուր կը բերէ , ըստ որում անոր
պատուիրած եմ որ ճամբան զՎիրգինիա բռնէ
ու իբր թէ իր աղաննոյն աղջիկը հոս բերէ :
Արգէն հայրն ալ հոս չը գտնուիր դիտաւորու
թիւննիս շուտով պիտի յաջողի . թէպէտև Իկի
կլիոս իր սիրահարը բաւական ընդդիմութիւն
պիտի ցուցնէ այս բանիս , բայց Իկիլիոսն և Ապ
պիոս . սրճափ տարբերութիւն կայ մէջերնին .

անշուշտ աւելի զօրաւոր մէկու մը սէրը տես-
նելով՝ պիտի ստիպուի իր սէրը դադրեցնել:
Բայց խօսքին հակառակը մտածենք, եթէ չը-
դադրեցնէ, մի՞թէ ես չեմ կրնար զինքը դադ-
րեցնել: () րէնքը կը հրամայէ որ ժողովուրդը
իր գլխաւորին հնազանդի: Ընշուշտ վիրդի-
նիա աւելի պիտի ընտրէ ազնուական ու զօրաւոր
իշխանի մը հետ ամուսնանալ քան թէ Իկիլիոսի:

ԿՂՈԳԻՌՈՍ ԿԸ ՄՏՏԵՒ:

Ինչպէս եղաւ Կղոզիոս, գոհացուցիչ լուր մը ու-
նիս:

Ը, յո՛, տէր իմ:

Ստոյգ կը խօսիս:

Հոռովմայեցուց մը պէս:

Օրուցէ ուրեմն:

Ինչպէս որ վիրգինեայի դուրս ելնելուն կ'սպա-
սէի, որպէս զեւ ձեր հրամանը կատարեմ. ճիշդ
հիմա զայն փողոցի մը մէջ տեսայ որ առանձին
կերթար, թեւէն բռնեցի և ըսի որ հետս պա-
լատը գայ. այս բանիս քիչ մը ընդդիմութիւն
ցուցուց, ինչ ատեն փողոցին մէջ եղողները պատ-
ճառը հարցուցին, պատասխանեցի թէ աղախ-
նոյս աղջիկն է և կ'ուզեմ զայն տուն տանիլ,
այսպէս բան մը չկրցան ըսել, և աղջիկը ամբը-
նալէն ստիպուեցաւ ահամայ ինձ հետեւիլ:

Եւ հիմա ո՞ւր է:

Ձեր պալատին մէջ կը գտնուի:

Կղոզիոս, ապահով եղի՞ր որ վարձքդ պիտի չ'կոր-
տունցնես, կրնաս զայն հոս զըզել:

Ձեր հրամանաւ:

ԿՂՈԳԻՌՈՍ ԿԸ ՄԵԿՆԵՒ:

(Ընտանիքն) Գործքերնիս շատ յաջող կ'երևայ.
անգամ մը վիրգինիա պալատս մանեւէն վեր-
ջը, ալ բանէ մը կասկած ու վախ չունիմ բնաւ:

ՎԻՐԳԻՆԵՒ ԵՍԻՌԻ ԴԻՄԲՈՎ ԸՌԱՆՑ ԵՐԵՍԸ
ՆԱՅԵԼՈՒ ԿԸ ՄՏՏԵՒ:

Բարի եկար, սիրուն օրիորդ. երջանիկ համարէ

ԿՂՈԳԻՌՈՍ .

ԱՊՊԻՌՈՍ .

ԿՂՈԳԻՌՈՍ .

ԱՊՊԻՌՈՍ .

ԿՂՈԳԻՌՈՍ .

ԱՊՊԻՌՈՍ .

ԿՂՈԳԻՌՈՍ .

ԱՊՊԻՌՈՍ .

ԿՂՈԳԻՌՈՍ .

ինքզինքդ որ զօրաւոր իշխանի մը սիրոյ կ'ար-
 ժանանաս, և պալատներու մէջ պիտի բնակիս :
 Վ.Ի.Գ.Ի.Ն.Ե. Պժժապդ կը համարիմ ինքզինքս, յետին աստի-
 ճան դժբաղդ, որ բռնաւորի մը անկարգ ու
 անօրէն կամքը՝ օրինաւոր ու անխախտ սէրը
 կ'ուզէ դադրեցնել : Մի կարծեր որ իմ նուե-
 րական սէրս քեզի պէս բռնաւորի մը ընծայե-
 լու անհաւատարմութիւնը կրնամ ունենալ, ին-
 ծի համար քու անուանածդ պալատը սոսկալի
 բանտ մըն է, և դուն անոր անգութ բանտա-
 պանը : Ասոնք կը խօսիմ քեզի առաջէն, որ-
 պէս զի քու անօրէն դիտաւորութիւնդ փոխես .
 դարձնուր զիս իմ ընտանեացս ու Իկիլիոսին
 գիրկը . Հռովմայեցւոյ մը գործ չէ ասիկայ :
 Կը կարծես որ այս ըրած բռնութեամբդ իմ
 միտքս կրնամ փոխել, հաստատուն եմ ու ան-
 զրգուելի Իկիլիոսի սիրոյն վրայ :

Ա.Պ.Գ.Ի.Ս. Կը ճանչնաս զիս օրիորդ :

Վ.Ի.Գ.Ի.Ն.Ե. Արդէն ըրածդ դորձքերը կը վկայեն քու ինչպէս
 մարդ ըլլալդ :

Ա.Պ.Գ.Ի.Ս. Աւելի աղէկ կ'ընես եթէ քիչ մը քաղաքավարու-
 թեամբ խօսելու ըլլաս :

Վ.Ի.Գ.Ի.Ն.Ե. Գիտե՞ս ուրեմն քաղաքավարութեան ինչ ըլլալը :

Ա.Պ.Գ.Ի.Ս. Օ, իս բռնութիւն բանեցնելու պիտի ստիպես :

Վ.Ի.Գ.Ի.Ն.Ե. Միթէ այս ըրածդ բռնութիւն չէ :

Ա.Պ.Գ.Ի.Ս. Անկիրթ, մտածէ անգամ մը որսւ առջև կը կե-
 նաս :

Վ.Ի.Գ.Ի.Ն.Ե. Կրթեալ, մտածէ անգամ մը ըրածդ անիրաւու-
 թիւնը :

Ա.Պ.Գ.Ի.Ս. (Օրիորդ, պիտի զղջաս ըրածդ յանդգնութեան
 վրայ, վերջէն դալիքը չիս կրնար կոր գուշակել :

Վ.Ի.Գ.Ի.Ն.Ե. Ի՞նչ է վերջէն գալիքը, ի՞նչ կերպով պիտի զղջ-
 ջացնես զիս : Արկու սիրահարներ յուսահա-
 տութեան անդունդին մէջ դահապիժելու հա-
 մար այդ իշխանութիւնը ստացար : Առաքինու-
 թեան զօրաւոր զէնքերով ծածկուած, մինչև

մահուան կէտս, մինչև վերջին շունչս պատրաստ
եմ իմ անմեղութիւնս պաշտպանելու և ըրած
անիրաւութիւնդ պարտաւելու :

Այդ խիստ ու դաժան դէմքերը զիս չեն կրնար
վախցնել, բռնաւոր. քեզ որ Հոռովմայեցւոց
վրայ իշխան կարգեցին որպէս զի ժողովուրդը
և քու հայրենիքդ ինչպէս որ օրէնքը կը հրա-
մայէ քու անձեզ աւելի պաշտպանես ու ար-
դարութեամբ կառավարես, դուն ընդհակառակը
ամէն օր ընտանեաց աչքերէ աղի արտասուք
հոսեցնել կուտաս. և այսօր զի՞նք քու բռնու-
թեանդ ենթակայ ընել կ'ուզես : Աւելի աղէկ
ունիմ անբան անասուն մը ըլլալ, քան թէ ա-
նողքելի բռնաւորի մը կամքը կատարել : (Նար-
կացիր, ինչուան որ բարկութեանդ բոցը մինչև
երկինք բարձրանայ :

ԱՊՊԻՈՈ .

(Որտեքը քեզին դարնելով) Ի՞նչ աստիճան յանդրդ-
նութիւն : Ո՞վ կայ դուրսը :

ՏԱՐԻՈՆ, ԿՂՈՂԻՈՍ, ԵՒ ՔԱՆԻ ՄԸ ՀՈԳԻ ՁԻՆԵԱԼ
ՆԵՐՍ ԿԸ ՄՏՆԵՆ :

Ի՞նչեցէք սա յանդուգն աղջիկը :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Օգուշացէ՛ք անմեղի մը վրայ ձեռք դպցնելու :

ԱՊՊԻՈՍ .

Ի՞նչեցէք կ'ըսեմ ու տարէք :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Ո՞ւր պիտի տանիք :

(Հանկարծ մտնելով Տիմոնի վրէժն զաշտնել էլ յա-
վելարտիկն :)

Սօսեցէ՛ք, որ ձեր մահը դտնէք :

(Սորտիկ շտնելով ետ էլ աշտնելն :)

Ի՛կիլիոս, և դո՛ւք ո՞վ անմահ աստուածներ, նե-
րողամիտ ու վկայ եղիք, որ հոս բռնաւորի մը
առջև իմ անմեղութիւնս պաշտպանելու համար
արիւնս կը թափեմ :

(Սորտ էլ վերցնէ որ շտնէ ինչպէս :)

ԱՊՊԻՈՍ .

(Շտնելով էլ ցախիկն ու թիւն էլ բռնէ) Առէ՛ք դա-
շնը ձեռքէն :

(Վերգրելն է ինչպէս ինչպէս :)

(Օգնութիւն :

(Վերգրելն է ինչպէս ինչպէս ինչպէս , ինչպէս ինչպէս ինչպէս :
Ինչպէս ինչպէս :

ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿՐԹԱԿՈՒՄ , ԵՒ ՄԵԾԻՆԱԿԱՆ ԿՐԹԱԿՈՒՄ :

(Յանկարծ զՎերգրելն է ինչպէս ինչպէս ինչպէս :)

ՄԵՍԻԱՆ .

(Վերգրելն է ինչպէս ինչպէս ինչպէս :)

ՎԻՐԳԻՆԻԱ .

(Գլխաւոր ինչպէս ինչպէս ինչպէս :)

ԻՎԻԼԻԱՆ .

(Ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :)

ՎԻՐԳԻՆԻԱ .

(Ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :)

ԻՎԻԼԻԱՆ .

Ինչպէս ինչպէս ինչպէս :

ՄԵՍԻԱՆ .

Ո՞ր ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :

ԻՎԻԼԻԱՆ .

Ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :

(Ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :)

ՄԵՍԻԱՆ .

Ո՞ր ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :

(Ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :)

ԻՎԻԼԻԱՆ .

Վերգրելն է ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :

ԱՊՊԻԼԱՆ .

(Ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :)

ԻՎԻԼԻԱՆ .

Ինչպէս ինչպէս ինչպէս :

ՄԵՍԻԱՆ .

Ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :

ԻՎԻԼԻԱՆ .

(Ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :)

ՄԵՍԻԱՆ , ՎԻՐԳԻՆԻԱ ԵՒ ԱՊՊԻԼԱՆ ԿՐԹԱԿՈՒՄ :

Ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :

- ԿՂՈԴԻՌՈՍ . Մերաւուծիւն կ'անուանես ստիկայ :
- ԻԿԻԼԻՌՈՍ . Ներեցէք պարոն, խօսքս ձեզի չ'ուղղեցի որ դուք
կը պատասխանէք :
- ԿՂՈԴԻՌՈՍ . Ի՛սցց գիտնալ պէտք էք որ իմ ազխինոյս աղ-
ջիկն է :
- ԻԿԻԼԻՌՈՍ . Ինչպէս :
- ԿՂՈԴԻՌՈՍ . Նորէն կրկնեմ ըսած խօսքս, քեզն ըսի որ ա-
ղախնոյս աղջիկն է, հետեաբար դուն անոր
համար ընելիք պաշտօն մը չ'ունիս հոս, ինք-
զէնքդ վտանդի մէջ չ'դրած՝ տեղդ դառնալու
խոհեմութիւնը ունեցիր :
- ԻԿԻԼԻՌՈՍ . Մտածէ՛ ըսածիդ վրայ կողոխոս, կշռէ՛ բերնէդ
եւրած խօսքերը, եթէ ոչ . . .
- ԱՊՊԻՌՈՍ . Ես ալ վկայ եմ և շատ ազէկ գիտեմ որ Ախր-
գինիա կողոխոսի աղախնոյն աղջիկն է :
- ՆՈՒՄԻՏՈՐ . Ներեցէք տէր իմ, ձեզմէ վատ ո՞վ գիտէ ատիկայ :
- ԿՂՈԴԻՌՈՍ . Ինչպէս. աղջկան հայրը զձեզ ամենքնիդ ալ կրո-
նայ ապահովցնել, բայց հոս չ'գտնուելուն կ'ըս-
տիպուինք սպասել :
- ԻԿԻԼԻՌՈՍ . Կը հասկնամ քու միտքդ կողոխոս, արդէն Ապ-
պիոսի լուծիւնն ալ ինձի աղէկ իմացնել
կուտայ իր անիրաւ զխտաւորութիւնը : Հոսմ-
մայեցի բերան մը այդ կերպ սոսկալի ստու-
ծիւն պէտք չէ՛ր խօսիլ. գլխուդ վրայ աստ-
ուածները կը կենան, զգուշացիր անոնց դէմ
մեղանչելէ : Ախրգինիա իմ օրինաւոր սիրա-
հարս է, զօրաւոր ապացոյցներ կրնամ բերել
անոր ընտանեաց վրայ : Ի՛սցց արդէն խղճմը-
տանքդ քեզմէ կը բողբէ, զքեզ կը տանջէ,
կերպարանքիդ վրայի գծերը յայտնի կը ցուցը-
նեն որ դուն քու կողմանէդ չես արտասաներ
այդ անհիմն ու անտեղի խօսքերը, ահաւասիկ
քու թելադիրդ : (Ն. Պոլեոս ցո-ցնելով)
- Դուն անոր անիրաւ կամաց գործիք մը
եղած՝ աստուածներուն բարկութիւնը վրադ
թափելու կը ջանաս : Աղէկ գիացիր,
որ Ախրգինիայի վրայ ունեցած անխախտ

սէրս փոխադարձ է, և ի՞նչ, դուն կը ջանաս որ նոյն սէրը ուրիշ անձի մը վրայ փոխադրես: Ափսոս, ափսոս քեզի որ իբրև Հոռիմայեցի կը պարծիս. պիտի զղջաս ըրածիդ վայ, բայց անագան հետևարար և անօգուտ:

ՆՈՒՄԻՏՈՐ .

Արթմնք ՚ի կրկնու, և Վիրգինիա հետերնիս տանինք, իմացուեցաւ խարէութիւնը:

ԱՊՊԻՈՍ .

Կրնաք երթալ, բայց առանց Վիրգինիայի:

ԻԿԻԼԻՈՍ .

Անկարելի է ատիկայ:

ԱՊՊԻՈՍ .

Կրնայ կարելի ըլլալ:

ԻԿԻԼԻՈՍ .

Իայց գուք արդարութեամբ դատաստան չէք տեսներ:

ԱՊՊԻՈՍ .

Այո՛:

ԻԿԻԼԻՈՍ .

Արեմն բանին եղելութիւնը իմացուեցաւ, իրաւունքը որ կողմը ըլլալը յայտնի կ'երևայ, ինչո՞ւ չէք թողուր որ Վիրգինիա հետերնիս տանինք:

ԱՊՊԻՈՍ .

Դատախազնիդ այնպէս կ'ուզէ:

ԻԿԻԼԻՈՍ .

Ի՞նչ իրաւունք ունի մեզի դէմ դատախազ ըլլալու: Գնութ ունեցիք, ո՞վ Ապպիոս:

ԱՊՊԻՈՍ .

Առդէն ըսի որ դատախազնիդ անիկայ է:

ԿԳՈԴԻՈՍ .

Մինչև որ Վիրգինիոս չ'գայ, չեմ կրնար ձեզի հետ դատ վարել:

ՆՈՒՄԻՏՈՐ .

Իարի՛, Վիրգինիոսի գալուն կ'սպասենք:

ԿԳՈԴԻՈՍ .

Իայց աղջիկը իմ քովս պիտի կենայ մինչև հօրը գալը:

ԻԿԻԼԻՈՍ .

Ի՞նչ պառճառաւ:

ԿԳՈԴԻՈՍ .

Քանի որ իմ աղախնոյս աղջիկն է, ինձի կը վերաբերի անոր պաշտպանել:

ԻԿԻԼԻՈՍ .

Կըզդիոս, մի ստիպեր զիս հետոք ուրիշ կերպ վարուելու. սիրոյ յուսահատութիւնը ամէն կերպ հնարք կրնայ մտածել:

ԱՊՊԻՈՍ .

Կարողութեանդ սահմանէն դուրս մի ելներ, պարոն. Վիրգինիա Կըզդիոսի քով պիտի կենայ մինչև հօրը գալը:

ԻԿԻԼԻՈՍ .

Արկինք. կը թողուս որ այս կերպ նախատանայ համբերեմ: Կ'ուխտեմ, կ'երդնում, ու ինչ ատեն

Ապսիտս բռնութեամբ զՎիրգինիա իրեն սեպ-
հականէ, իմ սուրս նախ անօրէն Վրդդիտս ու
վերջը անոր անգութ թելադրին սիրաբ պիտի
մտնէ: Հետեւէ ինձ, Սգրանդոն:

ԻԿԻՒՒՈՍ ԵՒ ՆՈՊՄԻՏԵՐ ԿԸ ՄԵՆՆԻՆ:

ԱՊՊԻՈՍ. Ըրգիլեցէք, մի թողուք որ Վիրգինիա հետ տա-
նին:

ԿՂՈԳԻՈՍ. (Գլխուս ելնելով) Պահապաններ, մի թողուք որ
Վիրգինիա դուրս ելնէ:

ԱՊՊԻՈՍ. (Լսանքէն) Պիտի ստիպուինք բռնութիւն բանեցը-
նել, բոլոր աշխարհք կործանի՝ դիտաւորու-
թեանէս ետ պիտի չ'կենամ:

(Գլխուս ելնելէն ին սօսէնայ ու կ'սկսէ ներսեւալ նամակը
գրել:)

“Հաւատարիմ ու քաջ զօրապետս:

“Քու հաւատարմութենէդ և բրած յաջողակ
“պատերազմներէդ շատ գոհ եմ, ժամանակ եւ-
“կաւ որ քեզի ստիպողական և ամենահար-
“կաւոր պատուէր մը զրկեմ, որ գործադրու-
“թեանը ապահով եմ որ անձանձիր հոգ կը
“տանիս: Ուստի այս նամակս առնելուդ պէս
“սկսիս Վիրգինիոս Հոովմայեցի հարիւրապետ-
“տին վրայ որ հոգ բանակին մէջ կը գտնուի,
“հսկողութիւն ընել, անոր ամէն շարժմունք-
“ները դիտել ու թող չտալ բանակէն մեկ-
“նելու: Ար խնդրեմ որ որչափ կարելի է այս
“պատուէրս ճշդիւ ՚ի գործ դնես ու լրտեսես
“որ Հոովմ չ'դառնայ:

ԱՊՊԻՈՍ ԵՒ ՍԵՐԵՍ ԴԻՅՆ ԵՒ ՏԸՄՆՊԵՏ
ՀՌՈՎՄԸՆ:

(Օտնիւն ին տէլ:)

ՏԸՐԻՄՆ ԿԸ ՄՏՆԷ:

Ըյս նամակը վարրօն պաշտօնակալիս տուր որ
շուտով տեղը հասցնէ:

ՏԵՐԻՈՆ . Շատ աղէկ տէր իմ :

ՏԵՐԻՈՆ ԿԸ ՄԵԿՆԻ :

ԸՊՊԻՈՍ . Սիրգինիա իմն :

ԸՊՊԻՈՍ ԿԸ ՄԵԿՆԻ :



ՏԵՍԱՐԱՆ Բ :

ԱՆՏՈՒՆԻՈՍ ԻԿԻԼԻՈՍ ԵՒ ՍԴՐԱԴՐՈՆ ԿԸ ՄՏՆԵՆ :

ԻԿԻԼԻՈՍ . Պիտի ընէք այս մեծ երախտիքը :

ՍԴՐԱԴՐՈՆ . Լյո՛, ապահով եղիր ըսի, տուր ինձի :

(Երբեք իմանալով ինչպէս յետեւի ու կը կարգուի :)

“ Լ՛մենաղնիւ պարոն :

“ Ձեր հայրական գութը անշուշտ պիտի շարժի
 “ ու խռովի ինչ ատեն այս նամակը ընդունիք :
 “ Եթէ պատերազմին արիւնալից գաշտին մէջ
 “ կը գտնուիք, ու նէտերնիդ ուղղած թշնամին
 “ դարնելու կը փութաք, տուէք նոյն փառքը
 “ ուրիշ Հոռոմայեցւոյ մը ժառանգելու, և դուք
 “ ձեր աղջիկը ազատելու աճապարեցէք : Սիր-
 “ գինիա մեծ վտանգի մէջ է, անոր գեղեցկու-
 “ թիւնը արիւնարբու և զօրաւոր նախանձորդ
 “ մը պատճառեց . Ապպիոս անոր սիրահարած՝
 “ կ'ուզէ անօրէն կերպիւ զայն իրեն սեպհա-
 “ կանել . ահաւասիկ ժամանակ որ ձեր արու-
 “ թեան ու առաքինութեան յաղթանակը կանգ-
 “ նէք : Երկարօրէն չեմ կրնար գրել, վախ-
 “ նալով որ չ'ըլլայ թէ Ապպիոս ինձմէ առաջ
 “ զձեզ արգիլելու հրամաններ ղրկէ զօրապե-
 “ տին : Արոշուեցաւ որ ձեր ներկայութեամբը
 “ դատաստանը տեսնուի, ըստ որում կողորհոս
 “ անունով անգգամ մէկը Ապպիոսէն գրգռու-
 “ ուած՝ կը պնդէ որ Սիրգինիա իր ազատնոյն
 “ աղջիկն է, և թէ Սիրգինիոս ալ այս բանս

“ շատ ազէկ գիտէ : [Թէպէտ և Իկիլիոս այս
 “ բանին շատ գէժ կ'եցաւ, բայց բռնաւորը վըճ-
 “ ուեց որ մինչև ձեր գալը Վիրգինիա Կլորի-
 “ ոսի քով կենայ : Արդ՝ արագաթուխչ արծ-
 “ լոյ նման սլացէ՛ք պատերազմի դաշտէն գէս
 “ ՚ի Հոռով՝ ուր Իկիլիոս մինչև անգամ պատ-
 “ րաստ է արիւնը թափել Վիրգինիայի հա-
 “ մար, և Վիրգինիա Իկիլիոսի” :

ՉԵՐ ԱՆՍԵՂԾ ԵՂԲԱՏՐԸ ՆՍԻՄԻՏՈՐ .

ԻՎԻԼԻՈՍ .

Աճապարէ՛ ուրեմն այս նամակը կարելի եղածին
 չափ շուտով Վիրգինիոսի ձեռքը հասցնելու :

ՍԴԻՐԱԿՈՆ .

Շատ բարի : Ապսիոս ալ դուրսը հրամաններ
 կուտայ որ Վիրգինիոս բանակէն կանչուի :

ԻՎԻԼԻՈՍ .

Անոր հնարքները շատ են Սգրադոն, յիբաւի
 դուրսէն անանկ կը պողայ, բայց գաղտնի
 կիրպիւ ալ ուրիշ պատուէրներ կը ղրկէ :

ԱՆՏՈՆԻՆՈՍ .

Սաղոյ է, ուրեմն շուտ ընենք : Դուք հո՞ս պի-
 տի կենաք :

ԻՎԻԼԻՈՍ .

Այո՛ հոս կենալ պէտք եմ, որպէս զի Վիրգինի-
 այի վրայ հսկողութիւն ընեմ :

ՍԴԻՐԱԿՈՆ .

Աւրեմն մնաք բարեաւ, մենք անձամբ կերթանք,
 զինքը կը գտնենք ու կը բերենք :

ԻՎԻԼԻՈՍ .

Երթաք բարեաւ, ալինիւ եղջարք. բարի ճանա-
 պարհ և յաջողութիւն կը մաղթեմ :

(Անտոնին) Սիրահարները բազդին խաղայիկներն
 են : — Անգամներս, շատ անգամ սիրոյ բռնու-
 թենէն նեղուած ու քաջալերուած բարձր պա-
 տերէ վեր ելնելով խաւարադէմ փեպոսէն չէ-
 իք վախնար, ու անոր տխուր թագաւորութեան
 մէջ ազատօրէն կը գալէիք, իսկ հիմա ինչո՞ւ կը
 թուլնաք. ո՞ւր է ձեր աշխուժութիւնը : Բայց
 չէ, թուլցած չե՛ն ու պիտի չ'թուլնան :

(Օտնիւն վրայ կու գայ :

Ո՞վ անմահ աստուածներ, ձեզմէ մի միայն մէկ
 չնորհք մը ունիմ ինդրելիք, ազդեցէք իմ սրը-
 տիս, յայտնի ըրէք, արդեօք Վիրգինիա զիս

պիտի թողնու, կամ պիտի ստիպուի՞ ակամայ ինձ-
մէ բաժնուիլ. . . իմացուցէք ինձ ասիկայ, որ ես
անոր անհաւատարմութիւնը կամ դժբաղդու-
թիւնը չ'տեսնելու համար՝ այս դաշոյնով իմ
կեանքս վերջացնեմ:

(Գաշոյնը կը փակուի: Ապրիլի 10-ը Գրեյն Գրեյն Գրեյն կը կայնի:)

Իսկ դուք բռնաւորի մը արժանի պատիժը ինձմէ
աւելի աղէկ կրնաք տալ. . . .

ԱՊՊԻՍՍ .

(Գրեյն Գրեյն Գրեյն) Անուանածդ բռնաւորը ա-
ւելի աղէկ գիտէ յանդուգն մէկու մը պատիժը
տալ:

(Իվիլիոս յանկարծ կը շփոթի:)

(Գորբուք եղողներուն) Ի՞նչեքք սա անզգամը. ու
վիրգինեայէն զատ ամէնքը դուրս հանեցէք:

ՄԷԿ ՔԵՆԻ ՀՈԳԻ ՆԵՐՍ ԿԸ ՄՏՆԵՆ ՋԻԿԻԼԻՍՍ
ԲՈՆԵԼՈՒ

ԻԿԻԼԻՍՍ .

Ազատ թող տուէք զիս, առանց վիրգինեայի
դուրս չեմ ելներ:

ԱՊՊԻՍՍ .

Ի՞նչեքք կ'ըսեմ սա անզգամը ու բռնի դուրս
տարէք:

ԻԿԻԼԻՍՍ .

Անդուձ, ապահով եղիր, ժամանակ պիտի գայ
որ այդ տուած մականուանդ գործադիրը ըլլամ:

(Սարգիսը Իվիլիոսի թեւերէն քանելով Գորբուք կը հանէն:)

ՎԱՐԱԳՈՏԻԸ ԿԸ ԳՈՏՈՒԻ:



ՏԵՍԱՐԱՆ Ա :

ԱՊՊԻՈՍԻ ՉԱԼԱՅԸ :

ԱՊՊԻՈՍ ԵՒ ԿՂՈՂԻՈՍ ԿԸՄՑԵՆՆ

ԱՊՊԻՈՍ . Եսանկ յամառեալ միտք , քանի քանի անգամ ընծայներ իրկեցի , ես ալ հետը անձամբ խօսեցայ , բայց դարձեալ ինչպէս որ յառաջ նոյնպէս ալ հիմա ամենեկն հաճութիւն չ'ցուցնէր , և ոչ անգամ երեսս նայիլ կ'ուզէ , չեմ գիտեր թէ ինչպէս այս գործքը պիտի յաջողի :

ԿՂՈՂԻՈՍ . Մի վճատիք տէր իմ : Արովճետեա զատաստանը տակաւին չ'եղաւ , անիկայ յոյս ունի որ դարձեալ իր ընտանեաց գիրկը կրնայ դառնալ , բայց ինչ ատեն զատաստանը ըլլայ և գործքը ուզածնուս պէս վճռուի՝ ալ պիտի ստիպուի ամենեկն ընդգիմութիւն մը չ'ընել : Այնպէս հայրն ալ չ'կրնար բանակէն դառնալ , ըստ որում զօրապետին նամակ գրած էք որ անոր վրայ հսկէ :

ԱՊՊԻՈՍ . Եյո՞ այնպէս է : Բայց հիմա ինչ կը մնայ ընել :
ԿՂՈՂԻՈՍ . Եյսօր ճիշդ զատաստանին օրն է . հրաման ըրէք Իկիլիոս և իր բարեկամները կանչելու , և հոս ամէն բան կարգի կը մտնէ ու ձեր սիրտը կը հանգստանայ :

ԱՊՊԻՈՍ . Ե՛ս ալ լաւ :

(Օւնգտիք իր տէր :)

ՏԵՐԻՈՍ ԿԸՄՑԵՆ :

ԱՊՊԻՈՍ . Ե՛րևոյ՛ Իկիլիոսի առնը մարդ զրկէ որ գայ զատաստանին ներկայ գտնուի :

ԿՂՈՂԻՈՍ . Եսանկ ըսելու ըլլաք չ'դար տէր իմ , պատճառ բերելով որ դեռ Վերգիլիոսս և կած չէ :

ԱՊՊԻՈՍ . Է՛ս պա ինչպէս ընենք :

ԿՂՈՂԻՈՍ . Թող ըսէ որ Վերգիլիոսս քեզ կ'ուզէ :

ԱՊՊԻՈՍ . Այո՛ ատանկ պատուիրէ :
ՏԱՐԻՈՆ . Շատ աղէկ :

ՏԱՐԻՈՆ ԿԸ ՄԵԿԵՆԻ :

ԿՂՈԴԻՈՍ . Այս կերպիւ պիտի ստիպուի անմիջապէս գալ ,
ըստ որում Վիրգինիա հոս ըլլալէն 'ի վեր ա-
մենեկն տեսած չէ , և ստիկայ իրեն համար մեծ
երջանկութիւն պիտի սեպէ :

ԱՊՊԻՈՍ . Շատ հնարագէտ ես , Կղոզիոս :

ԿՂՈԴԻՈՍ . Ձեզի ծառայելու պատրաստ եմ տէր :

ԱՊՊԻՈՍ . Այլ կը յուսան որ այս բանս յաջողի :

ԿՂՈՆԻՈՍ . Անտարակցս :

ԱՊՊԻՈՍ . Ի՞նչպէս :

ԿՂՈԴԻՈՍ . Բանի որ դուք ինձ կողմնակից ձևանաք , և ես
պնդեմ որ Վիրգինիա աղախնոյս աղջիկն է ,
ի՞նչ կրնան զրուցել , և ոչինչ : Ան ատեն կը
վճռէք որ աղջիկը ինձ արուի , և պիտի տեսնէք
որ աղջիկը պիտի ստիպուի , մանաւանդ պիտի
հաճի իսկ պալատի մը մէջ բնակելու :

ԱՊՊՎՈՍ . Ես ալ անանկ կը կարծեմ :

ԿՂՈԴԻՈՍ . Ասիկայ յայտնի բան մըն է :

ՏԱՐԻՈՆ ԿԸ ՄԵԿԵՆԻ :

ՏԱՐԻՈՆ . Տէր իմ , Իկիլիոս եկաւ :

ԿՂՈԴԻՈՍ . Շատ բարի , ուրեմն առանց զՎիրգինիա տեսնե-
լու հոս բերէք զայն :

ՏԱՐԻՈՆ . Շատ աղէկ :

ՏԱՐԻՈՆ ԿԸ ՄԵԿԵՆԻ :

ԱՊՊԻՈՍ . Ի՞նչ կը խորհիս Կղոզիոս , դատաստանը սկսի՞նք :

ԿՂՈԴԻՈՍ . Այո՛ . անմիջապէս :

ԱՊՊԻՈՍ . Ուրեմն տարածէ դուրսը որ դատաստանը մէկ ժա-
մէն պիտի սկսի :

ԿՂՈԴԻՈՍ . Ի՛արի :

ԿՂՈԴԻՈՍ ԿԸ ՄԵԿԵՆԻ :

ԱՊՊԻՈՍ . Դարձեալ բոլորովին ապահով չեմ :

ԻԿԻԼԻՈՍ ԿԸ ՄԵԿԵՆԻ ՈՒ ԱՊՊԻՈՍԻ ԱՌՁԵՆԻ ԿԸ ԽՈՆԱՐՉԻ :

Ի՛արի եկաք պարոն :

ԻԿԻԼԻՈՍ . Եթէ դալս բարի հետևութիւն մը ունենայ ,

ԱՊՊԻՈՍ . Գատաստանի ժամանակ ամէն բան կը յայտնուի ու կ'որոշուի :

ԻԿԻԼԻՈՍ . Ըտոր վրայ ապահով եմ, բայց մինչև դատաստանի ժամանակ

ԱՊՊԻՈՍ . Ձէ. Տիմա պիտի ըլլայ դատաստանը :

ԻԿԻԼԻՈՍ . Ի՞նչպէս կրնայ ըլլալ :

ԱՊՊԻՈՍ . Եղած ժամանակը կը տեսնէք :

ԻԿԻԼԻՈՍ . Բայց վիրգիներու դեռ չ'եկա :

ԱՊՊԻՈՍ . Բայց այսօր է դատաստանին օրը :

ԻԿԻԼԻՈՍ . (Մէկ կողմ) Ձեմ կրնար կոր ինքզինքս բռնել :

ԿՂՈՂԻՈՍ ԿԸ ՄՏՏԵՒ :

ԱՊՊԻՈՍ . Իմաց տուր կըողիտս :

ԿՂՈՂԻՈՍ . Ը,յո՛, մէկ ժամէն պիտի ժողովուրիս :

ԱՊՊԻՈՍ . (Իկելէսին) Ը,յո բանիս ընդդիմութիւն պէտք չ'ես ցուցնել :

ԻԿԻԼԻՈՍ . Բայց դուք չ'որոշեցիք որ վիրգիներու ներկայութեամբը դատաստանը ըլլայ :

ԱՊՊԻՈՍ . Ը,յո՛, բայց դուցէ անոր բան մը պատահած է և չ'կրնար գալ :

ԻԿԻԼԻՈՍ . Կ'սպասենք մինչև գալը :

ԱՊՊԻՈՍ . Ի՞նչ, մէկ անձի մը համար դատաստանը ե՛տ պիտի մնայ : Ըսիկայ տղայոց խաղաղիկը չ'նմանիր, Իկիլիտս : Ըմենեկին իրաւունք չ'ունիս այս բանիս դեմ գնելու :

ԻԿԻԼԻՈՍ . (Մէկ կողմ) Ի՞նչպէս իրաւունք ճանչցող մարդիկ են — Բարի, ձեր կամաց համաձայն ըլլայ :

ԱՊՊԻՈՍ . Ձէ թէ միայն իմ կամացս, հասկա օրինաց համաձայն : Ա՛նաս չ'ես ընկր եթէ ատանկ անուշութեամբ խօսիս :

ԻԿԻԼԻՈՍ . Բայց կ'աղաչեմ հրաման տուէք դատաստանէն առաջ անգամ մը վիրգիներու կերտը տեսնելու :

ԱՊՊԻՈՍ . Բարի, Տիմա կը դրիեմ. բայց դատաստանը շուտով պիտի ըլլայ :

ԻԿԻԼԻՈՍ . Պատրաստ եմ :

ԱՊՊԻՈՍ ԵՒ ԿՂՈՂԻՈՍ ԿԸ ՄԵԿՆԵՒՆՆՆԱՅԻՆ :

(Ընկելէն) Գեռ վիրգիներու չ'եկած դատաստան

ընել. ա՛հ... ասիկայ ուրիշ բան չէ, բայց եթէ
անօրէն բռնութիւն, անխիղճ գործ... Վիր-
գինիա, Վիրգինիա, ի՞նչ դժբազդ վիճակի մէջ
կը գտնուիս արդեօք. ի՞նչ կերպ մտածմունքն Ե-
քու փախուկ սիրտդ կը խուզեն ու կը մաշեն :
Ո՞վ կը կարծէր որ մեր ուրախութեան ամենա-
գեղեցիկ օրերուն այս կերպ տրամառիմ օրեր
պիտի յաջորդեն... Ո՞վ կերեակայէր որ երկու
անկեղծ սիրահարներ իրենց ուրախութեան
լրման ժամանակը մեկզմէկէ զատուած առան-
ձին պիտի հառաչեն ու հեծեն... Ո՞վ կը յու-
սար որ մարդկային սիրտ մը այս կերպ անխիղճ
ու անազորոյն խորհուրդ մը մտքէն կրնար անց-
նել. ո՞վ. և ո՛չ մէկը. . . Բայց հիմա վտանգը
կայծակի մը նման վրայ հասաւ ու զմեզ խոր-
տակելու կը փութայ. . . . Երկինք. Երկինք.
Ի՛նչպէս չէք փութար անօրէն մը պատժելու և
արդարութիւնը յայտնելու, այս նեղ ու վտան-
գաւոր միջոցիս մէջ մի միայն դո՛ւք կրնաք մեզի
օգնութեան հասնիլ, ձեր գործքերը զարմա-
նալի են...

Մասկանացու մը՝ որ Վեիթանայ անելանելի ու
մշտախաւար անդունդներուն ծայրը հասած՝ այն
ինչ անոնց խորափոր ու անյատակ տարածու-
թեան մէջ թաւալղոր գահալիժելու սրտա-
թունդ ու ահռելի վտանգին մէջ կը գտնուի,
դո՛ւք անյուսալի կերպիւ անոր օգնութեան ձեռք
կը կարկառէք. ու կ'ազատէք զայն նոր կորս-
տեան վհերուն մէջ գլորելու տրկածէն. իսկ
հիմա երկու անմեղ դժբազդ սիրահարներու
վրայ չէք ողորմիր, այնպիսի սիրուն ու չնաշխարհիկ
կերպարանք մը ժանտաբարոյ բռնաւորի մը
ձեռքէ չէք ուզեր ազատել : Եփսոս... Աւրեմն
առէք այս իմ աղետալի կեանքս, կը զղուիմ
այս աշխարհէն, առանց Վիրգինիայի անոր զը-
ուարձութիւնները ինձի համար դառնահամ
թոյն են : Եղէ, վերջացուցէք իմ կեանքս,
գուցէ ասանկ ընելով անողոր բռնաւորին սիր-

տը կը կահզանայ ու զՎիրգինիա ազատ կը թողու... կ'ուզեմ մեռնիլ, միայն թէ Վիրգինիա ազատելով՝ իմ ածիւնս ամփոփէ, ու իմ տխուր դամբանիս վրայ իր ողբը ընելով սիրոյ ծաղիկները սփռէ տարածէ անյուշ գերեզմանիս բոլորախբը... Արդէն անանկ կ'երևայ որ մահուան ջերմութիւնը բոլոր մարմնոյս վրայ կը տիրէ:

Վիրգինիա, անգամ մը դէմքդ չ'տեսնելով պիտի մեռնիմ, անգամ մը քու հեշտալուր ձայնդ չը լսելով պիտի անշնչանամ... Ապպիոս խօսք տուաւ որ դատաստանէն առաջ զքեզ անգամ մը հոս զրկէ. բայց չեմ հաւատար որ անօրէնը իր խոստմանը վրայ հաստատ կը կենայ, ուրեմն յաւիտեան մնաս բարեաւ... Վու յիշողութեանդ մէջ ինձի համար ալ քիչ մը տեղ տուր, որպէս զի քեզմէ անհետագարձ բաժնուելէս վերջը երբեմնակի զես յիշես:

(Վիրգինիա դրան ուղեւ իջնալ:)

(Մանց գեանելու:) Մնաս բարեաւ, Վիրգինա. ես կը մեռնիմ... դուն ապրէ որ իմ տխուր ածիւնս ամփոփես:

(Սուրբ իւրեղ:)

ՎԻՐԳԻՆԻԱ. Ա՛հ... (Վրան իջնալէ ու իջնալէ) ո՛ւր կ'երթաս Իկիլիոս...:

ԻԿԻԼԻՈՍ. (զՎիրգինիա գեանելէն յետո՛ւ իջնալէ) Ա՛հ, Վիրգինիա...:

ՎԻՐԳԻՆԻԱ. Ի՞նչ մելամաղձոտ կերպարանք է ատիկայ. ինչո՞ւ քու վերջին հրաժարականդ կուտայիր. ո՛ւր պիտի երթաս:

ԻԿԻԼԻՈՍ. Յաւիտեանականութիւն. հո՛ն կ'ուզեմ երթալ:

ՎԻՐԳԻՆԻԱ. Օ՛խ պիտի թողո՞ւս ուրեմն, Իկիլիոս. առանձին կ'ուզես երթալ ու զէս բոլորովին գառն աղիտից մէջ ձգել. ես ալ պատրաստ եմ հետդ գալու. ա՛ղէ երթանք ուրեմն:

ԻԿԻԼԻՈՍ. Չէ. դուն պէտք ես ապրիլ:

ՎԻՐԳԻՆԻԱ. Ուրեմն դուն ալ պէտք էս ապրիլ : Ինչո՞ւ տտանդ կը վճատիս . դեռ դատաստանը չեղաւ : **Ապպիոս** քանի անգամ ընծայներով իմ միտքս ուղեց փոխել . բայց ես հաստատ եմ քու սիրոյդ վրայ : **Գու՛ն** կուզես ինքզինքդ մեռցնել . ուրեմն ինչո՞ պիտի օգտէ մինչև հիմա քաշած նեղութիւննիս . սպասե՛ք քիչ մ'ալ մինչև որ հայրս գայ . դատաստանին մէջ խարէութիւնը պիտի իմացուի . **Ապպիոս** կ'ստիպուի ան ատնն վիս աղատ թողուլ , և անգամ մը անոր ձեռքէն ազատեմէս վերջը , կ'երթանք ուրիշ քաղաքի մը մէջ մեր օրերը երջանկութեամբ կ'անցնենք :

ԻԿԻԼԻՈՍ . Ի՛նչ կ'ես . **Վիքզինիա** . դատաստանը կէս ժամն պիտի ըլլայ :

ՎԻՐԳԻՆԻԱ . Եւ ինչո՞ւ , հայրս դեռ չ'եկաւ . ի՛նչպէս դատաստան կրնայ ըլլալ :

ԻԿԻԼԻՈՍ . Որչափ դէմ կ'եցայ այս բանիս . բայց բռնաւորը ամենեկին մտիկ չ'ըրաւ . քանի որ դատաստանէն առաջ այսչափ բռնութիւն կը բանեցընեն . յայտնի է որ դատաստանի մէջ ալ հայրդ անգամ եկած ըլլայ . դարձեալ իրենց մտքի չարութիւննիս պիտի ընեն :

ՎԻՐԳԻՆԻԱ . Բայց ի՛նչ կրնան ընել , քանի որ ես միշտ բացասական պատասխան տամ :

ԻԿԻԼԻՈՍ . Ա՛մէն բան :

ՎԻՐԳԻՆԻԱ . Ե՛տ աստիճան յոյսդ կորսմ՞ ես . Ի՛կիլիոս :

ԻԿԻԼԻՈՍ . Էտեւութիւնները շատ գէշ կ'երևան կոր ինծի :

ՎԻՐԳԻՆԻԱ . Ո՛ւր էր որ **Վիքզինիոս** եկած ըլլար :

ԻԿԻԼԻՈՍ . Ի՛նչու՞ շատ **Ապպիոս** պատուէր իրկած է զօրապետին որ թող չ'տայ :

ՎԻՐԳԻՆԻԱ . Ի՛այց Սղրադոն և Նտոնիսոս մեր կողմանէ դացին կարծեմ՞ զայն բերելու :

ԻԿԻԼԻՈՍ . Ե՛տ . բայց կրնայ ըլլալ որ **Ապպիոսի** հրամանը աւելի շուտ հասնի :

ՎԻՐԳԻՆԻԱ . Ուրեմն չէ՞ք կարծէր որ հայրս գայ :

ԻԿԻԼԻՈՍ . Է՛իմա ամէն բան բաղդին վրայ կայտցեալ է :

ՎԻՐԳԻՆԻԱ . Մէկը աճապարեով կուգայ , ո՞վ դէք . այս ընթացքը ինձ ընտանի կ'երևայ :

(Գեղեցիկ և հոգեւոր ինքնաշնորհ :)

Ո՛հ. հայրս է :

ՎԻՐԳԻՆԻՈՍ ԿԸ ՄՏՆԷ :

ՎԻՐԳԻՆԻՈՍ .

Ա՛յ. հայրդ, սիրելի վերգինիս :

(Սիրելիս լինելու ժամանակ :)

ԻԿԻԼԻՈՍ .

Ո՛ւսկից գիտցար որ հոս եմք . վերգինիս :

ՎԻՐԳԻՆԻՈՍ .

Սղարդոն զուցեց :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Ո՛ւր է Սղարդոն :

ՎԻՐԳԻՆԻՈՍ .

Ա՛նոնք տուն գացին, որպէս զի, եթէ Մեսիյա և Իկիլիոս հոն կը գանուին առնուն բերին. իսկ ես աճապարեցի զքեզ տեսնելու, մի վահանար երբէք :

ԻԿԻԼԻՈՍ .

Ա՛յպիսու գիտէ՞ գալերնիդ :

ՎԻՐԳԻՆԻՈՍ .

Չէ. ամենևին : Որովհետև ինչ ատեն Սղարդոն և Անտոնինոս եկան և նամակը ինձ տուին. թըշնամեաց հետ պատերազմելու կը պատրաստուէինք. իսկոյն զօրապետէն հրաման առի, ու բանակէն դուրս ելնելով ձիերնիս մտրակեցինք ու խոտորնակ ճամբով թռչունի նման հոս սլացանք :

ՎԻՐԳԻՆԻԱ .

Ո՛վ աստուածներ, ինչպէս զարմանալի են ձեր գործքերը, կարծես թէ նորէն կենդանութիւն ստացայ :

ԻԿԻԼԻՈՍ .

Գատաստան ալ մէկ քառորդէն պիտի ըլլայ, շատ ուրախ եմ ժամանակին հասնելուդ :

ՎԻՐԳԻՆԻՈՍ .

Օ՛ւաւա, հիմա անանկ մէկ ժամանակ մը եկաւ որ աստուածները քու առաքինութիւնդ փորձեն. հաստատ եղիւր, երկիւղ մի՛ ունենար երբէք, դուն մտքէդ որոշէ մինչև անգամ մեռնիլ, քան թէ այս անօրէն գործքին հաճութիւն տալ : Վրիչ մը վերջը երկու անուն ունիս ժառանգելու, կամ առաքինի և կամ ապերախտ : Մէկ ժամէն բոլոր Հռովմայեցիք զքեզ իրենց խօսակցութեան նիւթ պիտի ընեն, և պիտի խօսին քու վրադ, կամ գովութիւն և կամ պարսաւ : Վրեզմէ ապահով եմ, բայց իմ ծնողական պարտաւորութիւնը կ'ստիպէ ասոնք մէկ անգամ քու ականջիդ

հնչեցնել: Կամքդ ազատ է, չեմ կրնար քու կամացդ դեմ դնել, բայց ասանկ նեղ միջոցի մը մեջ զքեզ խրատելը անհրաժեշտ պարտաւորութիւնս է: Արդ՝ քու կամացդ կը յանձնեմ ամէն բան, Վիրգինիա, խօսէ, ո՞րը աւելի նախամեծար կ'ընտրես:

ՎԻՐԳԻՆԻԱ. Սիրելի հայր, աւելի աղէկ ունիմ մեռնիլ, քան թէ Իկկիոսի սէրէն բաժնուիլ:

ՎԻՐԳԻՆԻՈՍ. Աստուածները քու պաշտպանդ ըլլան ուրեմն:

ՍԴՐԱԳՈՆ ՆՈՒՄԻՏՈՐ ԱՆՏՈՆԻՆՈՍ ԵՒ ՄԵՍԻԱ ԱԸ ՄՏՆԵՆ:

ՄԵՍԻԱ. (Վիրգինիոսի ներքին խոսքով) Ո՛հ, Վիրգինիոս, քիչ մ'ալ ուշանայիր իմ անշունչ դիակս պիտի տեսնէիր: Ար տեսնես ի՞նչ դժբաղդութիւն եկաւ վրանիս:

ՎԻՐԳԻՆԻՈՍ. Մի՛ վհատիր, Մեսիլա, ամէն բան կարգի կը մտնէ:

(Սրբադոնին դառնալով:)

Ի՛նչպիսիք, ազնիւ բարեկամս:

(Չեւտը իւր ներքին:)

(Այս խօսակցին մէջ Մեսիլա և Վիրգինիա իւր փոփոխ:)

ՍԴՐԱԳՈՆ. Եղբայէս դուք ալ, ազնիւ Վիրգինիոս:

ՎԻՐԳԻՆԻՈՍ. Այաճո՛վ եղիր որ ըրածդ մեծ երախտիքը պիտի չ'կրնամ մոռնալ:

ՍԴՐԱԳՈՆ. Պարտաւորութենէս աւելի բան մը չըրի՛, Վիրգինիոս, որ այդ երախտագիտութեան արժանի ըլլամ:

ԱՆՏՈՆԻՆՈՍ. Այրը անթիւ բազմութիւն լեցուեր է և դատաստանին կ'սպասեն:

ՆՈՒՄԻՏՈՐ. (Վիրգինիոսին) Այպիսոս իմացա՞ւ ձեր գալը:

ՎԻՐԳԻՆԻՈՍ. Կարծեմ ո՛չ գեռ:

ՆՈՒՄԻՏՈՐ. Ուրեմն աւելի աղէկ կ'ըլլայ որ դատաստանի ժամանակ երևան ելնէք:

ՎԻՐԳԻՆԻՈՍ. Իմ միտքս ալ ատանկ է:

ՆՈՒՄԻՏՈՐ. Ի՛նչպիսիք, — Վիրգինիա. քեզն հարցմունք ետսձ ժամանակի համարձակ խօսէ. ամենևին

մի վախնար :

(Ա իրգիննէսս որեւ յը ին պահուի :)

ՏԱՐՈՒՆ ԿԸ ՄՏՆԵ :

ՏԱՐՈՒՆ .

Պարոններ , դատաստանը պիտի սկսի . պատրաստ
եղիք :

ՆՈՒՄԻՏՈՐ .

Արդէն պատրաստ ենք :

Իհիլիոս , սիրտ առ , արտասանելու խօսքերդ ազ-
գու և գրաւող ըլլան : Ա՞նք է Վիրգինիոս :

ՎԻՐԳԻՆԻՆԻՍ .

(Պահուած որեղևն) Հոս եմ , անհոգ եղիք :

ՆՈՒՄԻՏՈՐ .

Հատ բարի , դատաստանը սկսուած ժամանակը
երևան ելեք :

ԱՊՊԻՍ , ԿԸՂԴԻՍ ԵՒ ՏԱՐՈՒՆ ԿԸ ՄՏՆԵՆ :

Ա

Պատրաստ էք ուրեմն դատաստանը սկսելու :

ԻԿԻԼԻՍ .

Ա՛յ :

(Ապրիլնսս անուի յը վրայ ին նստի :)

(Ժողովուրդը կ'սկսի որեսարանին երևը լեցուիլ :)

(Արդէն) Պատրաստուէ ուրեմն դատող վարելու :

ԿԸՂԴԻՍ .

Արդէն պատրաստ եմ , տէր իմ :

ԱՊՊԻՍ .

Հատ լաւ : Ա՛րքես թէ Վիրգինիա քու աղակ-
նոյդ ազդիկն է , ես ալ իրաւունք կու տամ այդ-
բանին , նոյնպէս Վիրգինիոս ալ կու տար բայց
հոս չէ , անոր համար

Ա

(Պահուած որեղևն ելնելով) Ա իրգինիոս հոս է . . .
մի կարծեր որ ատանկ անիրաւ գործքի մը ի-
րաւունք կու տայ :

Ապրիլնսս նստած որեղևն կ'ելնէ ու շարեւէ երևը
ին նստի :

(Ա իրգիննէսս վնի կ'երայարանի գրասարանին արջև
կ'երևայ :)

(Ա պրիլեան յը ասինքնին ալ լաւս ին կ'ելան :)

Ա

Չե՞ս խօսիր , Ապրիլոս . . . ի՞նչ , մտքի դրածդ չա-
րու թիւներ չ'կրցա՞ւ յայտելի . . . Մինչև երբ պի-
տի չը դադրիս քու բանաւորութեանդ դժուա-
րատար գաւազանը բոլոր Հոովմայեցւոց վրայ
տարածելու . . . Մինչև երբ անգորր ու խաղաղ

ընտանիքներ աղետալի դէպքերով պիտի խռովեա... Սինչև երբ մէք Հոռովմայեցիքս քու անզուսպ և արիւնոուշտ կատաղի բռնաւորութեանդ պիտի համբերենք...

(Դողովորէան դասնալով) Հոռովմայեցիք, հայրենակիցներս, ես իմ սիրելի հայրենեացս օգտին համար պատերազմի արիւնալից դաշտին մէջ անվհճեր սիրտս թշնամեաց նէտերուն կ'ուզըմ, իսկ բռնաւոր մը, զորն որ դուք իբրև ձեր գլխաւորը կ'ընդունիք, ձեզի համար որոգայթներ կը լարէ, ձեր հայրենիքը, պերճ Հոռով կործանելու կը ջանայ. իբրև երկրորդ Տարկուինիանոս, ձեր խաղաղ հայրենիքը խոռովալից ու աղմկալի ծովերու կը դարձնէ... Ինչպէս կը համբերէք, քաղաքակիցներս, դուք յարդի կը տորուանքներով սկսած կրակը բանի տեղ չէք դներ, բայց պիտի տեսնէք որ շուտով մը բուցաւորելով բոլոր կողմ պիտի աւարածուի:

Գրեւն Դողովորը. կեցցէ՛ Վիրգինիոս:

Ռբէշ կ'ուէ. կեցցենս Վիրգինիոս:

ՎԻՐԳԻՆԻՈՍ. Սկայ եղէք, հայրենակիցներս, ձեր խղճմտանքովը դատեցէք այս գործքը... Ե՛հաւաստի անօրէն Աղոդիոսի հետ հիմա իմ իրաւացի դատս պիտի վարեմ, ու պատիւս պահանջեմ. Երթընամն ձեր մտքերը, որպէս զի ես արգարապէս դատուիմ...: — Հառանջ եկուր, Աղոդիոս, և զուցէ թեյաղբիդ սովընցուցած դասը:

ԱՊՊԻՈՍ. Խօսէ Աղոդիոս, և դոցէ՛ սա անզուսպ բերանը որ այսչափ համարձակ կը խօսի:

ԿԼՈՂԻՈՍ. Նորէն կրկնելու հարկաւորութիւն չ'կայ, յայտնի բան է որ Վիրգինիա իմ աղախնոյս աղջիկն է:

ՆՈՒՄԻՏՈՐ. Ե՛րբ յայտնուեցաւ այդ բանը:

ԿԼՈՂԻՈՍ. Ե՛նոր ծնունդէն 'ի վեր:

ՆՈՒՄԻՏՈՐ. Ի՛արի, այսչափ ժամանակէ Վիրգինիա իրաւամբ Վիրգինիոսի աղջիկը ըլլալով անոր տունը կ'ընակի, հիմա անոր Իկիլիոսի հետ նշանուալ ժամանակը իմացար որ քու աղախնոյդ աղջիկն է:

է: Ո՞վ անոյց զՎիրգինիա, զո՞վ տեսաւ Վիրգինիա, զքե՞զ թէ զՎիրգինիոս, արդ՝ փորձով հաւաստէ քու բաճո՞ղ:

ԱՊՊԻՈՍ .

Օրուցէ, Կղոզիոս, հաւաստէ զանոնք: Ինչո՞ւ լուռ կը կենաս:

ՎԻՐԳԻՆԻՈՍ .

Ի՞նչ կ'ուզես որ խօսի, բռնաւոր: Վրու անոր տուածդ դասը այսչափ է, ասկէց աւելի տեղեկութիւն մը տուած չես անոր որ խօսի: — Կղոզիոս, դարձիր տեղդ, մի գրգռեր աստուածներուն և իմ բարկութիւնս. կթէ ո՞չ, շատ դէշ հետեւութիւններ կրնան ծագիլ, որոնք զքեզ պիտի զղջացնեն: Գարձիր կ'ըսեմ քու տեղդ, և դադրէ անիրաւ մէկու մը շարութեան գործիքը ըլլալէ:

ԿԼՈՂԻՈՍ .

Ի՞նչ այդպէս խրոխտալով կը խօսիս, Վիրգինիա իմ աղախնոյս աղջիկն է:

ԱՊՊԻՈՍ .

Ե՛տ, իրաւունք ունի Կղոզիոս:

ՎԻՐԳԻՆԻՈՍ .

Թէ որ կ'ուզես կրնամ ուրիշ կերպիւ ալ իրաւունքը քեզ ճանչցնել:

ԱՊՊԻՈՍ .

Վիրգինիոս, կարողութեանդ համաձայն խօսէ, եթէ ո՞չ այդ անզուսպ բերանը շուտով կ'անշնչանայ:

ՎԻՐԳԻՆԻՍՈՍ .

Սպառնալով չես կրնար իրաւունք ստանալ:

ԱՊՊԻՈՍ .

Երդէն իրաւունքը Կղոզիոսինն է, ու ես կը վճռեմ որ Վիրգինիա անոր տրուի:

ՎԻՐԳԻՆԻՍ .

Ե՛հ

ՄԵՍԻԱ .

Ո՞վ աստուածներ . .

ԻԿԻՂԻՈՍ .

Հանդարտէ Վիրգինիա:

ԱՊՊԻՈՍ .

Ե՛ն Կղոզիոս, տար հետդ:

ՎԻՐԳԻՆԻՈՍ .

(ՀԿղոզիոս հրէլով) Ո՞ւր պիտի տանի: (Եւրոպէ-բրէլ և Բրայն:)

ԳՐԻԳՈՐԻՍ .

Եսիկայ իրաւամբ դատաստան տեսնել չէ՛, բրնտութիւն է, անիրաւութիւն:

ՄԵՍԻԱ .

(Եւրոպէսէ աւել- ձնկան վրայ Բրայն) Թէ որ խօսքերը և իրաւունքը քեզի ազդեցութիւն մը չեն ընել, գոնէ դժբաղդ խնամածուի մը շարժմունքները քու անողոքելի սիրտդ շարժեն: Գնձ ունեցիր, ո՞վ իշխան:

ԱՊՊԻՈՍ .

Պարապ տեղը ծնկան վրայ մի գար, անիրաւ դատաստան չեմ կրնար տեսնել : Ա իրգինիա Արդդիոսինն է :

(Իկելեսու և Ա իրգինիա կարասասունն :)

ՆՈՒՄԻՏՈՐ .

Ա՛պպիոս , այս գործքիդ աստուածները վրէժխընդիր պիտի ըլլան :

ԱՊՊԻՈՍ .

Այժէ անիրաւ ըլլար :

ՆՈՒՄԻՏՈՐ .

Ա՛սկէց աւելի անիրաւ գործ մը չ'կրնար ըլլալ :

ԱՊՊԻՈՍ .

Գ՛ռն եղար իմ գործքերս պարսաւող . վճուեցի՛ , կը վճուեմ որ Ա իրգինիա Արդդիոսի արուի :

ՎԻՐԳԻՆԻՈՍ .

Ուրեմն հրաման տուր որ իմ վերջին բարեւ տամ :

ԱՊՊԻՈՍ .

Տ՛ուր , բայց շուտով :

(Ա իրգինիա լալաբին հօրը կը փախտի , և հայրը զայն բնասկան հետոս տալելով՝ ժողովրդեան մեջին կասաց մը մեկուն դաշտը կ'առնու :)

Ա իրգինիա , դժբա՛ղդ զաւակս , այս սոսկալի ժամուս մէջ պատերազմի դաշտէն հոս սլացայ , որպէս զի զքեզ վերջին անգամ տեսնեմ . . .

Ա՛ն ուրեմն իմ վերջին ու յաւիտենական հրաժարականս , այս է եղեր քու վերջին երջանկութիւնդ , որ քու գովելի առաքինութիւնդ պաշտպանես . . . Օ՛քեզ բնաւ պիտի չ'մոռնամ . այս վերջին սոսկալի վայրկեանները մինչև յետին շունչս զիս պիտի սոչորեն ու քրտմընեցնեն : Հաւատնան մնաս բարեւաւ , Ա իրգինիա , զքեզ այս անողորմ բռնաւորին ձեռքէն չեմ կրնար ազատել , ծնողական զգացմունքները ու ազդու խօսքերը անոր սիրտը չի կրցան շարժել , բայց աս սուրը և անկէց պատճառած մահը գրեզ բոլորովին կ'ազատէ :

(Տեսարանին մեջ եղանները կը լաղեն որ դաշտը յետեւ առնան . բայց անկէայ շուտով մը Ա իրգինիայի սիրտը իօնելով՝ քեռին կը փութ զայն , ու սուրը հանելով Ապպիոսին կը ցոցնէ :)

Ա՛նգուժ , այս անմեղ արիւնը պիտի պահանջէ քեզմէ իւր վրէժը :

(Սորը բացումը պետարանէն դուրս ժողովրդեան մեջ
էլ մտնէ :)

Մըէժինդրուժիւն . վըէժինդրուժիւն . . .

(Վանի մը պեղէ ին կրկնուի . ժողովրդեան մեջ մասը
նէրս ին բնութի :)

ԱԳՊԻՈՍ ԵՒ ԿԳՈՒԻՈՍ ՇՓՈԹԱԾ ԿԸ ՄԵՎՍԻՆ :

ՄԵՍԻԱ .

Մ իրգինիա , սիրելի զաւակս :

(Մ իրգինիայի մարմնոյն առջև ծնկան վրայ կոտայ ու
կարգատուէ :)

(Լնարունկնոս և Նսմարոր ին փոփան . վըջէն Անարո-
նկնոս և Սրբարդոն զՄեսիա վըջնելով դուրս ին քանկն :)

ԻԿԻՒՈՍ .

Նրկինք . բոլոր տարուցս շրջանին մեջ ասանկ ա-
ղետալի օր մը ծագեցիր երբէք . . . Աճա՛
քու այսօրուան ծագած արեգականգ արինա-
գոյն ճառագայթներուն հետ մէկ տեղ միւ-
գինիայի անմեղ արիւնն ալ դէպ 'ի քու գիրկդ
կը մխայ , ահա՛ պայծառ արեգական հետ մէկ
տեղ միւգինիայի ամենազնիւ կհանքն ալ
կանհետանայ . . . Աւա՛ղ անբուժելի ցաւոցս . .

Թուար միւգինիա . . . գացիր , անհետացար . . .
ուրիշ պաշտօն մը չ'թողուցիր ինձ , բայց եթէ
քու ախուր աճիւնդ ամիսփեղով՝ սուգ ընել
վրան . ողբա՛լ , հեծն՛լ և հառաչել . . . — Ին-
րեկամներս , թող տուէք որ ես ալ անոր ըն-
կերանամ :

ՆՈՒՄԻՏՈՐ .

Հանգարտէ , դժբաղդ Իկիլիոս : Նշիր երթանք
այս ախուր տեղէն . . .

ԻԿԻՒՈՍ .

Ո՛ւր երթանք , ո՛ւր է միւգինիա :

(Վարդատուէ :)

1 ԺՈՂՈՎՈՒՐԳ . Ո՛վ ախուր օր :

2 ԺՈՂՈՎՈՒՐԳ . Ո՛վ չարագուշակ օր :

3 ԺՈՂՈՎՈՒՐԳ . Ի՞նչպէս այն չնաշխարհիկ կերպարանքը անշունչ
ու դեղնեալ դետին կը կենայ :

ԻԿԻՒՈՍ .

Ինուժիւն . քու բոլոր գեղեցկացնող գիծերովդ
կրնամ ասոր նման սքանչելի կերպարանք մ'ալ
յօրինել . . . Ո՛ւր են այն գեղեցիկ օրերը , ո՛ւր

մնացին սիրամառ զգացումները, ո՞ր թողուցիր
զանոնք և կ'երթաս Վերդինիա . . . Այս աշ-
խարհք՝ ինձի համար ողբոց ու հառաչանաց տե-
ղի մըն է ասկէց վերջը . . . Գուն մեռար, և
ինչու ևս ապրիմ . . .

(Կ'ուզէ ինչպէս զարնել:)

ՆՈՒՄԻՏՈՐ .
ԻԿԻԼԻՈՍ .

(Թե՛ն է քանելով) Ի՛կիլիոս, հանդարտէ: —
Անկեղծ սէրերնիս զորն որ մահը կ'ընց, ապա-
հով եղեր որ քիչ մը վերջը դարձեալ զմեղ 'ի
մի յօղաւորելով՝ իւր կ'նիքը պիտի անհետա-
ցըցէ . . . Տախտեան մնաս բարեաւ: —

Վայրենակիցներ, ո՞ր են ձեր Հոովմայեցի ար-
դարագատ սրտերը, թող խղճան, շարժին այս
աղետալի մահուան վրայ, ու անոր վրէժը անո-
ղորմ բռնաւորէն առնուն . . . Ա՛ղէ. Վերդի-
նիայի շնչասպառ դիակը գետին փռուած կը
կենայ, չէք ուղեր անոր մահուան վրէժինդիր
ըլլալ:

- ՆՈՒՄԻՏՈՐ . Ա՛րէժինդրութիւն . . .
- 1 ԺՈՂՈՎՈՒՐԴ . Ա՛րէժինդրութիւն . . .
- 2 ԺՈՂՈՎՈՒՐԴ . Ա՛րէժինդրութիւն . . .

ԻԿԻԼԻՈՍ . Ա՛րիք ուրեմն:

3 ԺՈՂՈՎՈՒՐԴ . Օ՛կնքերնիս առնունք, հայրենակիցներ, բռնե՛նք,
զարնե՛նք, սպաննե՛նք բռնաւորները: Պալատ-
ներնին, տուներնին այրենք, վառենք ու զՀը-
ռովմ ազատենք ու խաղաղցնենք:

1 ԺՈՂՈՎՈՒՐԴ . Պաարատ եմ՝ վրէժինդիր ըլլալու:

2 ԺՈՂՈՎՈՒՐԴ . Ե՛ս ալ:

3 ԺՈՂՈՎՈՒՐԴ . Ե՛ս ալ:

4 ԺՈՂՈՎՈՒՐԴ . Ե՛ս ալ:

ԻԿԻԼԻՈՍ . Գալեցէ՛ք սուրեմն: Ա՛րէժինդրութիւն: Ա՛րէժ-
խնդրութիւն. մեռնին բռնաւորները:


(Ի՛նչու վերցնելով ինչոսնէն:)

ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԸ ԳՈՑՈՒԻ:

Վ. Ե Ր . Պ.







ԳԻՆՆ Է Ք. 50 Կ.

1787-1792

2-4/11

2013

1787-1792

2-4/1

2013

